

Ա. ՍԱՐԿԼԱԶԵԱՆ

ՆԱՀԱՊԵՏ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ

Դ Ր Ա Մ Ա

Զ Ո Ր Ս Ա Ր Ա Ր Ո Վ



PRINTED IN GREECE

◆ Ա Ր Ի Զ
1935

891.89

1210

U-28

Ungelungene W.

Zuschuss

Zuschuss



ԳՈՐԾՈՂ ԵՆԶԻՆՔ

	Տառիք
ՆԱՀԱՊԵՏ ՆԱՀԱՊԵՏԵԱՆ՝ բանչիկ,	50
ՄԱԳԹԱՂ՝ նրա կիներ,	45
ՍԻՐԱԲ՝ նրանց սառյ որդիք,	27
ԱՇԽԵՆ՝ նրանց ազգիկը,	19
ՎԱՀԱՆ՝ նրանց կրտսեր որդիք,	17
ԱՆԱՀԻՏ՝ նրանց հորաք (Բ. արարից),	20
ԱՐՏՄԿ՝ նրանց փեսան (Բ. արարից),	26
ԱՇՈՏ՝ (25
ՎԱՐԴԱՆ՝ (Սիրաբի կուսակցական	32
ՄՈՒՇԵՂ՝ (ընկերները	23
ԳԵՂԱՄ՝ Վահանի կուսակցական ընկերը	22
ԱՂԱԲԱԲՈՎ, ԱՐՏԵՄ ՊԵՏՐՈՎԻՉ ճարտարապետ.	45
ԱԿՈՓՈՎ, ՎԱՐԴԱԶԱՐ ԱՌԱՔԵԼՈՎԻՉ՝ զործարանատեր	50
ԲԱՂՎԱՄՈՎ ԲՈՂԴՆԱՆ ՍԵՐԴՅՅԻՉ՝ զործարանատեր,	55
ՍՈՒՐԶԱՆԴԱԿ,	20-25
Երկու դիմումներ հրատարակելու («մատուցելու»)	20-25

—

Գործող աննիմֆ հշանակում շարիքն ունին այն արա-
ում, երբ հանդիս են գալիս առաջիկանց անգամ: Հետագայ արար-
ներում, նրանց շարիքն ու դիմազմերը համապատասխանորեն
փոխում են:

—

Առաջին արարը՝ թիֆլիսում 1914 թ. Յուլիսին,
Երկրորդ արարը՝ թիֆլիսում 1917 թ. Հոկտեմբերին
Երրորդ արարը՝ Երևանում 1920 թ. Օգոստոսին
Չորրորդ արարը՝ 19... թ. աշնանը

ՆՌԱԶԻՆ ԱՐԸՐ

Բնք ներկայացնում է բնդունարան:

Խորի պատի մէջտեղից մի դուռ՝ դէպի նախասենեակը. այ պատից մի դուռ՝ դէպի բնակարանի միւս մասերը, իսկ ձախ պատի վրայ՝ երկու լուսամուտ:

Կանաչուրուցիներ կիս սերտպական եւ կիսաարեւելեան: Խորի պատի ձախ կողմը եւ ձախ պատի երկու լուսամուտների միջև մի-մի բախտ՝ ծածկուած գորգերով եւ բարձրով: Խորի պատի այ կողմը մի գրադարան՝ լիք զեղեցկակազմ գրքերով: Այ պատի կողմը, նախաբեմիմ մտ, մի բազմոց եւ երկու սիկնաթոռ: Գրանց առաքը՝ սայտնի փոքրիկ սեղան: Աննախի զամազան մատերում՝ փափուկ աթոռներ: Բազմոցը, սիկնաթոռները եւ աթոռները կառւ պատանների մէջ են, ինչպէս լինում է, սպորտաբար, ամառ. ժամանակ:

Դռների եւ լուսամուտների վրայ վարագոյրներ:

Պատերի վրայ կախուած են Բամբիի, Խիմեան Հայրիկի, Ղ. Ալիշանի եւ Վարդան Մամիկոնեանի նկարները:

Տ Ե Ս Ի Լ 1.

ԱՐՏԱԿ ՍԻ ԱՇԽԵԼՆ

Աշխերը նստած է բազմոցի վրայ. իսկ Առակը՝ բազկաթոռի վրայ, երեսը դէպի հանդիսակները:

ԱՐՏԱԿ.— Սակայն Վահանն ուշացաւ: Կարծում եմ, մինչեւ անգամ, որ սպասեիս աւելորդ է: Յանձնեցէք նրան այս գիրքերը (Հանուս եւ պայտուակից երեխ գիրքի եւ շաղխ Աշխենին) եւ սասցէք, որ անցնի ինձ մօտ:

ԱՇԽԵԼՆ.— Դուք էլի գրքեր էք բերել:

ԱՐՏԱԿ.— Այո՛, ի՞նչ կայ որ:

ԱՇԽԵԼՆ.— Այն՛ որ Վահանն խաղառ մտահան է արել իր վերաքննութիւնները: Մինչև սեպտեմբեր հազիւ ամիս եւ կէս է մնացել, իսկ նա գիշեր-ցերեկ ընթերցանութեամբ է զբաղուած:

ԱՐՏԱԿ.— Վահանն այնքան ընդունակ տղայ է, որ
 քի ամլան էլ բաւական է, որպէսզի վերաքննութիւնն
 ըին պատրաստ լինիլ Բայց եւ այնպէս, հետք կը խօսեմ
 այս ժամին:

ԱՇԽԷՆ.— Եսողին լսող է հարկաւոր Անցեալ օրը
 Աշոտն էլ գայիլ աւետարան կարդաց զիսին, բայց...

ԱՐՏԱԿ.— Ձէ, Վահանն ինձ կը լսիլ Ի դէպ՝ Աշոտն
 այսօր ձեզ ժօտ չի՞ լինելու:

ԱՇԽԷՆ.— Ձգրեմ՛ս Ինչո՞ւ էք հարցնում:

ԱՐՏԱԿ.— Մայրիկս քիւֆիւս է պատրաստել եւ
 պատուիրել է, որ առանց Աշոտի տուն չգատնամ երեկոյ-
 կան:

ԱՇԽԷՆ.— Եթէ գայ, կ'ստեմ, Բայց վերջին օրերս,
 չգրեմ ինչո՞ւ, նա խոյս է տալիս մեր տնից:

ԱՐՏԱԿ.— Պատճառն այն է, որ, նրա ստելով, ձեր
 հայրիկն է դրդում Սաֆարովին, որ գործադուլաւորն ըրին
 ոչ մի զիջում չանի:

ԱՇԽԷՆ (Բորթոլուս).— Ո՛չ, իմ հայրիկն ընդունակ
 չէ այդ քանին:

ԱՐՏԱԿ.— Ճիշդն ասած, իմ հաւատս էլ չի գալիս
 Բայց ամէնքն էլ պնդում են, թէ Սաֆարովը նրա խոր-
 հրդուք է շարժում: Դուք պէտք է դիտէիք այս առաւօտ
 Աշոտի վրդովմունքը, երբ նա սեռաւ ձեր հայրիկին Սա-
 ֆարովի դրասնեակից ելնելիս (Ոսի կնկերով) Դէ՛, եւ
 դ՛նացի:

Զանգահարութիւն

ԱՇԽԷՆ.— Սպասեցէ՛ք, Գուցէ Վահանն է. (Մտնում եւ
 նստանսնակ, նստանսնակում՝ կշտներանիով), Լա՛ւ եւ յար-
 դում ժամագրութիւնդ:

Տ Ե Ս Ի Լ Զ:

ՆՐԱՆՔ ԵՒ ՎԱՀԱՆ

ՎԱՀԱՆ (Հեւտիով).— Ներեցէ՛ք, ընկ. Աբառի, Մա-
 տաղի էին լուր տալ Գարայիլիին եւ Բուդնեւին այսօր-

ուսան ժողովի մասինն Ստիպուած էի ինքս հանգիպել նրանց. որս համար ուշացայ:

ԱՐՏԱԿ.— Այո՛, սիրելիս, բայց իմ տրամադրու-
թեան տակ այնքան քիչ ժամանակ է մնում, որ աւելի
չառ է մի ուրիշ սրտան ձգենք այս ժողովը:

ՎԱՀԱՆ (Վճռակամ).— Անկարելի է, ընկ. Արտակ:
Ի՛հպուզ մի բնակով էլ լինի՛ պիտի դաքս Հազիւ եմ ըն-
կերներին իբրս բերել: Մի քանի հոգի ընտւ. չէին ուզում
դալ այսօրուսն ժողովին: Բայց երբ իմացան, որ դուք
Զուիցերիայից անձամբ ծանօթ էք Լեւնինին՝ շատ հետա-
քրքրուեցին:

ԱՐՏԱԿ.— Որ այդպէս է՛ շտապենք, Հա՛, չմտա-
նամ ասել, որ բերել եմ քեզ համար Մարքսի «Կապիտալ
և զարձու աշխատանք» ը, Էնգելսի «Ընտանիքի, պետու-
թեան եւ մասնաւոր սեփականութեան ծագումը» եւ Լա-
սալի «Ի՞նչ է սահմանադրութիւնը»:

ՎԱՀԱՆ (Յափշտկոյրեամբ).— Ո՛ւր են:

ԱՆԻՔՆ.— Մասս են: Երբ գերագաճաս՝ կը տամ
քեզ:

ԱՐՏԱԿ.— Դէ՛, գնանք: Ընկ. Աշխէն, ցտեսութիւն:

ԱՆԻՔՆ.— Յտեսութիւն:

Երեւով միասին դէպի նախասենեակ: Այս միջոցին, բանալին տար-
ժում է դոսի դրան մէջ:

ՄԱԳԹԱՂ (Նախասենեակում).— Բարե, Պ. Արտակ:
Ի՞նչ է, ես գայիս եմ, դուք գնում էք:

ՎԱՀԱՆ (Նախասենեակում).— Մայրիկ, ինչքում եմ,
մեզ մի զրաղեցնիս Մի զայրկեան իսկ ժամանակ չունենք:

Տ Ե Ս Ի Լ Յ.

ԱՆԻՔՆ ՆԻ ՄԱԳԹԱՂ

ՄԱԳԹԱՂ (Գլխարկով ևս մի երկու կապոց ձեռքին).—
Հրդեհ է պատահել, ի՞նչ է: Ո՛ւր էին այդպէս շտապում
ԱՆԻՔՆ.— Վահանը ժողով ունի:

ՄԱԳԹԱՂ.— Հիմա էլ դա է խելքը ժողովների տուելի
 Հայրիկը տանը չէ՞, (Գլխարկը դնում և սեղանին և պահք
 հովանհարուստ) :

ԱՇԽԷՆ.— Ոչ, Իսկ դո՞ւ ուր էիր :

ՄԱԳԹԱՂ.— Գնացի Անահիտի մօտ, մտածելով, թե
 կարող է պատահել նոր լուր ունենայ Սիրաքից, ևնզ՞
 աղջկայ այքը ջուր կարեց սպասելով :

ԱՇԽԷՆ (նայելով թեի ժամացոյցին).— Դեռ մինչև
 Ռուսաստանի գնացքը քառորդ ժամ կայ, Ով գիտէ, գու-
 ցէ . . .

ՄԱԳԹԱՂ.— Քանի՞ քանի՞ այգուխի գնացքներ կ-
 կան ու վերագարձան . . .

Ց Ե Ս Ի Լ Է .

ՆՐԱՆՊ ԵՒ ՆԱՀԱՊԾԸ

ՄԱԳԹԱՂ (Թանկարժ աննկով նահապետին).— Այս
 ե՞րբ եկար :

ՆԱՀԱՊԾ.— Հէնց հիմա :

ՄԱԳԹԱՂ.— Նոր քան իմացա՞ր :

ՆԱՀԱՊԾ.— Ոչ, Հիմա պատահեցի Պ. Վարդանին և
 Աշոտին, նրանք էլ նոր լուր չունէին, Ի գէտ, Աշխէն ջան,
 այս գլխարկը եւ իրերը վերցրու սեղանից, նրանք հիմա
 ուր որ է կը գան :

ՄԱԳԹԱՂ.— Ի՞նչ կայ որ :

ՆԱՀԱՊԾ.— Ասացին, որ ուղում են մեզ մօտ ան-
 ցընել, Կարծում եմ, որ գործադուլի մասին են ուղում
 լուսել, Սաֆարովը, ինչպէս երևում է, բաւական նեղն է
 լինել գրանց, իր յամասութեամբս Քիթները շատ կախած
 էին երևում :

ԱՇԽԷՆ.— Հայրիկ, քիչ առաջ երեք պարոններ քեզ
 էին հարցնում, Ասացին, որ շտապ գործ ունեն նկատ և
 ժամը 6-ի մօտերը նորից կը գան :

ՆԱՀԱՊԾ.— Ովքե՞ր էին :

ԱՇԽԷՆ.— Չգիտեմ: Ահա՛ իրենց այցեւորները
ՆԱՀԱՊԵՏ (Կարգում է ուսանիսն շտապարձութեամբ).

— Ակապով, Բարբաժով, ինձ ինչեք Ազարաբով: Ի՞նչ գործ
ունեն սրանք ինձ հետ . . .

Չանդանարություն

Աշխարհի գիտարկն ու իրեր առեկող՝ մտնում է Շախաբենեակ:

Տ Ե Ա Ի Լ Ե .

ՄԱԳԻՍՏԱՆ, ՆԱՀԱՊԵՏ, ՎԱՐԴԱՆ ԵՒ ԱՇՈՏ

ՎԱՐԴԱՆ.— Բարեւ, տիկին նահապետեան:

ԱՇՈՏ.— Բարեւ ձեզ (Համբուրում է Մագրադի ձեռ-
քը):

ՄԱՐԹԱՂ.— Բարեւ, բարեւ նասեցէք խնդրեմ: Աշոտ,
քանի որ է չեա երեւոյժս: Ի՞նչ է պատահեր

ՆԱՀԱՊԵՏ (Հեղկանով).— Մե՛ծ գործերի վրայ է . . .

ԱՇՈՏ (Չորտրեամբ).— Երօք որս (Մագրադիին) Ու-
րեմն աշօք է: Իւր չկայ Սիրաքից:

ՎԱՐԴԱՆ.— Չարմանալի է թէ ինչո՛ւ աշօքն ու-
չացաւ: Երէկ մենք մինչեւ անգամ ենթադրում էինք, թէ
այս գիշեր մի լուս քէֆ ենք անելու նրա հետ միասին:

ՆԱՀԱՊԵՏ.— Այդպէս է երխասարգների ճակատա-
դիրը: Նրանք ենթադրում են, թող ուրիշներ կարգա-
դրում:

ԱՇՈՏ.— Վնաս չունի: Հետու չէ այն օրը, երբ մենք,
երխասարգներս, ոչ միայն ենթադրող, այլ նաև կար-
գադրող պիտի լինենք:

ՆԱՀԱՊԵՏ.— Անչո՛ւշա, անշուշա . . . Յուր այն է
միայն, որ գրանից մի տասնծին բարձր չի ծնելու:

ԱՇՈՏ.— Նայած թէ ում համար:

ՆԱՀԱՊԵՏ.— Ամենից առաջ՝ մեր ժողովրդի համար:

ԱՇՈՏ.— Նայած թէ ժողովուրդ ստեղծ, ով ի՞նչ է
հասկանում:

ՆԱՀԱՊԵՏ.— Մինչեւ այժմ գոնէ, հայ ժողովուրդ:

ստեղծ, ամէն ոք հասկանում էր այն մարդկանց, որոնք հայ են ծնուած եւ իրենց հայ են համարում:

ԱՇՈՏ.— Հիմա ժամանակները մի քիչ փոխուել են: Ամմուան հասկացողութեամբ, հայ աշխատաւորներն են միայն կազմում հայ ժողովուրդը:

ՆԱՀԱՊԵՏ (Հեղեմեմիս).— Հայ սուսարակներ, հայ գործարանատէրը, ընդհանրապէս հայ ունեւորը հայութիւնից դուրս են, անշուշտ:

ԱՇՈՏ.— Այո՛, մենք նրանց հայ ժողովուրդ չենք համարում:

ՆԱՀԱՊԵՏ.— Ինչքա՞ն երջանիկ կը լինէին այն մարդիկ, եթէ ուրիշներն էլ երբեմն նրանց դուրս նկատէին հայ ժողովրդի ցանկերէց:

ՎԱՐԴԱՆ.— Ուրիշներն ո՞վքեր են:

ՆԱՀԱՊԵՏ.— Ա՛յ, օրինակ, թուրքերն ու քրդերը: որոնք թալանում եւ ջարդում են սահմանի այն կազմի հայերին: Ա՛յ օրինակ, հարեւան թաթարները, որոնք, մի քանի տարի առաջ, ուղում էին քնաջնջել այստեղի հայութիւնը: Ա՛յ, օրինակ, ռուս իշխանաւորները, որոնք ուղում են քայքայել, խեղճացնել հայութիւնը թէ՛ այստեղ եւ թէ՛ այնտեղ: Այս բոլոր ուրիշները, իրենց հարուածները հայ ժողովրդի դէմ ուղղելիս, որքան զխեմ, ունեւոր ու չունեւոր չեն հարցնում, կամ, եթէ հարցնում են, միմիայն նրա համար, որ առաջին հերթին հայ ունեւորները ոչնչանան: Սա կարծեմ շատ ձեռնառ է ձեզ համար, այնպէս չէ՞, «ընկեր» Աշոտ, հա՛, հա՛, հա՛ . . .

ՄԱԳԹԱՂ (Նահապետիմ կրտսերմեմիս).— Ինչպէս երևում է, դու այսօր ձախ ստքի վրայ ես վեր կացել: Ասուտից հետո խօսել չի լինում: Դո՞նէ հիւրերի հետ . . .

ՆԱՀԱՊԵՏ (Չուարք).— Դու էլ բա՛ն ասացիր Գ. Վարդանն ու Աշոտը ի՞նչ հիւրեր են մեզ համար: Նրանք տանու մարդիկ են: Իայց (Ծիծաղով) եթէ դու սրանց հիւրերի տեղ ես դ՛նում՝ դո՞նէ մի երկու շիշ գարեջուր բեր դիր առաջները:

ՄԱԳԹԱՂ (Ոսթի եղեմեմիս).— Ես էլ, խկապէս, ականջն

տաւելի եւ՛ ձեռք վէճեւրին, ու . . . (Շատագո՛վ եղնու՛մ է աք դըռ-
նով)։

ՎԱՐԴԱՆ.— Աւելորդ է, տիկին, նեղութիւն մի կը-
բէք։

ՆԱՀԱՊԵՏ.— Վնաս չունի, թո՛ղ մի բան ըերի խը-
մենք, Քէֆու էլ աչսօք մի քիչ տեղը չէ։

ՎԱՐԴԱՆ.— Պատճառն ի՞նչ է, Պ. Նահապետեան։

ՆԱՀԱՊԵՏ.— Պատճառը գուք էք։

ՎԱՐԴԱՆ.— Ե՛տ։

ՆԱՀԱՊԵՏ.— Այո՛, դուք ինչ ձեռք ընկերները։

ՎԱՐԴԱՆ.— Մենք ի՞նչ ենք արել, որ։

ՆԱՀԱՊԵՏ.— Դուք ձեռք կաղմակերպած գործադու-
լով Ասֆարավի գործարանը փակման վառնդի տակ էք դը-
րեր։

ԱՇՈՏ (Գրգռւած).— Շատ էլ լաւ ենք արել։ Աւելի
էթէ Ազարարովը, Ակոփովը եւ Բաղրամովը մեր ներկա-
չացրած սահանջները չընդունեն՝ նրանց գործարաններն
էլ պիտի փակուեն։

ՆԱՀԱՊԵՏ.— Կեցցե՛ս . . . Իսկ դու մտածե՛լ ես այն
աշխատուորների մասին, որոնց դու հայ ժողովուրդ ես
համարում, և որոնք փողոց են նետուած։

ԱՇՈՏ.— Հոզ մի՛ արէք, նրանք անգործ չեն մնայ։

ՆԱՀԱՊԵՏ.— Ո՛վ պէտք է նրանց գործ տայ։ Աս-
մա՛րցիւր թէ Աբաշիձէն . . . Իսկի հետաքրքրուե՛լ ես, թէ
դրանց գործարաններում աշխատող հարիւրաւոր բանուոր-
ներից քանիսն են հայ (Յարգում՝ Վարդանին) ես կարող
եմ դեռ հասկանալ, Պ. Վարդան, որ Աշտի պէս ջահելները
անխոհեմ քայլեր են կատարում։ Բայց դուք և ձեր միւս
տարեց ընկերները ինչպէ՞ս է որ չէք կշռադատում ձեր
արածի հետեանքները։

ՎԱՐԴԱՆ.— Զուք էք կարծում, Պ. Նահապետեան,
թէ մենք գործադուլի մի քանի անպատեհութիւնները
չենք գիտակցում։ Բայց դուք էլ այժմ թող էք անում այն
անխիղճ շահագործութիւնը, որին ենթարկում են հայ կա-
պիտալիստներից շատերն իրենց բանուորներին՝ խմանալով

հանդերձ, որ վերջիններս ջախջախիչ մեծամասնութեամբ հայերից են կազմուած:

ՆԱՀԱՊԵՏ.— Հայ կապիտալիստը կապիտալիստ է, ինչպէս եւ միւսները, և նրանց պէս պիտի շահագործի իւր բանուորներին՝ լինին նրանք հայ թէ ոչ-հայ: Բայց այս հաւասար պայմաններում իսկ, չէ՞ որ հայ ունեւորը մեզ համար գերադասելի է քան օտարը:

ԱՇՈՏ.— Ինչո՞վ է գերադասելի:

ՆԱՀԱՊԵՏ (Գրգռուած).— Եթէ ուրիշ բան էլ չլինի՝ հէնց թէկուզ նրանով, որ տանկահայկական յեղափոխութեան եւ հայ-թաթարական կոխուների ժամանակ, դուք հայ ունեւորների օգնութեանն էիք գիմում, զէնք զնելու համար:

ԱՇՈՏ.— Դեռ ոչ մի հայ հարուստ մեր կուտակցութեանը դրամ չի տուել, առանց դաշոյնի ծայրը զգալու:

ՆԱՀԱՊԵՏ.— Այո՛, բայց ինչո՞ւ դուք ձեր դաշոյնի ծայրը օտարազգի հարուստներին էլ չէիք ցոյց տալիս:

ՎԱՐԴԱՆ.— Անշուշտ, մենք որոշ տարբերութիւն դրել ենք եւ դնում ենք հայ եւ օտար հարուստների միջև՝ հէնց թէկուզ այն պատճառով, որ առաջինները հայ անուն են կրում եւ, հետեւաբար, պէտք է որոշ պարտականութիւններ ստանան են հայութեան հանդէպ:

ՆԱՀԱՊԵՏ (Դառնալով Աշոտին).— Այդպէս է չէ՞, սիրելի Աշոտ: Երբ որ այդպէս է, երբ որ դուք հայ հարուստին ազգային որոշ պարտականութիւնների ենթակայ էք նկատում, իսկ օտար հարուստին ոչ՝ առաւ ուրիմն, դուք անթոյլատրելի պէտք է համարէիք, որ հայի գործարանը սիակուի. մինչդեռ օտարինը բանում է, և յետոյ արդար եղէք խոտոմանելու, պարոնճե՛ր, որ հայ հարուստը միշտ բանութեան տակ չէ ազգային պարտականութիւններ կատարել: (Յետ յաշնով քուսանուսի վարագոյրը) Նայեցէ՛ք, այս հոյակապ դպրոցին, որ հարիւր հազարներ է նստել: Մի՞թէ դաշոյնի գորութեամբ է ստացուել այդ հսկայական գումարը դպրոցի բարերարից: Մեր եկեղեցիներից, վանքներից, դպրոցներից, բարեգործական եւ կուլտուրական հաս-

տատու թիւններից շատերը ի՞նչ վիճակի մէջ կը լինէին, և առհասարակ դոյութիւն կ'ունենա՞յին, եթէ հայ ունեւորել յստարակամ նուիրատուութիւնները չլինէին . . . (Շուրջը նայելով) Բայց մեր գարեջուրն ի՞նչ կղաւ. Կոկորդոս չոր-ցաւ, իսկ սրանք Նոյի ազգաւն են գարձել: (Շարժում և դէպի աջ դուռը):

ՎԱՐԴԱՆ.— Աւելորդ է, Պ. Նահապետեան, Միւնոյն է, և բկար նստել չենք կարող:

ՆԱՀԱՊԵՏ.— Ձէ, սպասեցէք մի տեսնեմ: (Ելում և աջ դռով):

ԱՇՈՏ.— Կատարեալ բուրձուական իդէօլօգ, Կարծում եմ, հիմա դու էլ կասես որ միանգամայն աւելորդ է սեէ յոյս դնել Պ. Նահապետեանի միջնորդութեան վրայ: Այս ասուտա, եթէ տեսնէիր նրա մթազնած դէմքը, երբ գուրս կկաւ Սաֆարովի գրասենեակից, . . . դու էլ չէիր պըն-զի, որ գիմենք նրա միջնորդութեանը: Ես այլևս կասկած չունիմ որ նա է խորհուրդ տուել Սաֆարովին, որ գործարանի փակման սպառնալիքը յայտարարել:

ՎԱՐԴԱՆ.— Ճիշդն ասած, ես այդքան վատ կարծիքի չեմ Պ. Նահապետեանի մասին. բայց առայժմ ես էլ անսպաս եմ նկատում խօսել նրա հետ գործադուլի մասին:

Տ Ե Ս Ի Լ Ե.

ՆՐԱՆՐ, ՄԱԳԹԱՂ, ԵՒ ՆԱՀԱՊԵՏ

ՆԱՀԱՊԵՏ (Դնելով սեղանի վրայ մի սկուտեղ՝ վրան գաւ-րեցրի շիշ, զաւարանք, պսուղ, անակներ և պաստաւաղներ).— Մինչև և ձեռքս չհասցրի՝ գլուխ չեկաւ:

ՄԱԳԹԱՂ.— Ի՞նչ անեմ. տանը սառնարան չկայ, որ ուզածդ վայրկեանին պող գարեջուր հանեմ: Մինչև խանութից բերել տուի . . .

ՆԱՀԱՊԵՏ.— (Լեցնելով զաւարանք).— Լա՛ւ, լա՛ւ, մի՛ նեղանայ Դիտենք, որ ժրաջան տանտիկին ես Դէ, վերցրէք զաւարանքի Կենդանութիւն, որջ լինէք, ուրախ (Զրիկացնում են և խնում) Կեցցես, Մաղթաղ, մեր սպա-

սելը արժեց:

ՎԱՐԴԱՆ.— Իբրև որ շատ պաղ է:

ՆԱՀԱՊԵՏ (Վարդանին).— Հիմա մի քիչ էլ ձեռ
մխու գործերից պատմեցէք: Ի՞նչ լուր կայ Հօֆից և Վէս-
տէնենդից:

ՎԱՐԴԱՆ.— Նրանք արդէն ճանապարհուել են իրենց
պաշտօնավայրերը:

ՆԱՀԱՊԵՏ (Տանն կեղևելով).— Գիտէք ի՞նչ: Նրկիւղ
եմ կրու՞մ թէ այդ նգովից արժատ թուրքերը գրանց էլ
կաշտեն և իրենց ձեռքին գործիք դարձնեն:

ՎԱՐԴԱՆ.— Այդ մասին անհոգ եղէք: Պսլի մեր
ընկերները մօտիկից հսկու՞մ են նրանց քայլերին:

ՆԱՀԱՊԵՏ.— Իսկ ձեր ընկերները հսկու՞մ են նաև որ
պահպանուի բարենորոգումների ձրագրի աթիւ ստեղ-
ծուած ազգային համերաշխութիւնը:

ՎԱՐԴԱՆ.— Ի՞նչու համար էք հարցնում:

ՆԱՀԱՊԵՏ.— Կսեցի, թէ ձերոնք այլոստում են, որ
ընդհանուր կուսակալութիւնների մէջ բացուած բոլոր
գլխաւոր պաշտօնները տրուին ձեր ընկերներին: Եթէ այս
տեղեկութիւնը ճիշդ է, կը նշանակէ, որ այս գործի շուրջը
գոչացած ազգային համերաշխութիւնը վտանգի տակ է:

ԱՆՈՏ.— Բայց չեմ հասկանում, թէ ի՞նչ ազգային
համերաշխութեան մասին է խօսքը:

ՆԱՀԱՊԵՏ (Չայնը բարձրացնելով).— Այն համերաշ-
խութեան, սիրելի՛ Աչոտ, որին պէտք է ձգտի ամէն հայ
մարդ՝ ամբողջ ազգին վերաբերեալ գործերու՞մ:

ՄԱԳԹԱՂ.— Կա՛ւ, դուք էլ մի քիչ ուրիշ բաների
մասին խօսեցէք: Ծարուանակ նոյն վէճերն եմ լսում ձե-
զանից: Աչոտ, դու պողին շմօտեցար: Պ. Վարդան, դուք էլ
փոքրեցէք այս տանձը. շաքարի պէս քաղցր է:

ԱՆՈՏ (Վերցնելով սի կտր ջանն).— Ծնօրհակալ եմ:
Ի՛է, ընկեր Վարդա՞ն:

ՎԱՐԴԱՆ (Ուրի կցնելով).— Ես պատրաստ եմ:

ՆԱՀԱՊԵՏ.— Վա՛հ, ի՞նչ էք շտապում: Սպասեցէք,
գոնէ այս շիւք վերջացնենք:

ՎԱՐԴԱՆ.— Չէ, Գ. նահապետեան, խիստ շատապա-
զական մի գործ ունենք:

ՆԱՀԱՊԵՏ (Ոսփ կղնկով).— Մեզքը ձեր շինքը և
մենակ կր կոնձեմ:

ՎԱՐԴԱՆ.— Դէ, ցտեսութիւն:

ՆԱՀԱՊԵՏ.— Ծտեսութիւն (Ուղեկցում է մեկնողներին
նտիասնեակ եւ վերադառնալով իր սեղը, լեցնում զուարթ):

ՄԱԳԹԱՂ (Նահապետին).— Այ մարդ, ի՞նչ ես դու
էլ ամէն անգամ կոխ սարքում այս երիտասարդներէ
հետ:

ՆԱՀԱՊԵՏ (Ընկելով զարեշորք).— Ես կոխու Ի՞նչա-
նից խաղաղասէր մարդ որակ՞դ կարող ես դո՞նել:

ՄԱԳԹԱՂ.— Եսզագասէրը որ դու ես, հաղա կըռ-
ուսակ՞րն օվ է:

ՆԱՀԱՊԵՏ.— Կուտասէրն նա է, սիրելիս, որ մարդ-
կանց իրար է ղցում, նրանց մէջ անմխաբանութիւն և
հակասակութիւն սերմանում: Ես աշխատում եմ հայերի
մէջ իրարհասկացողութիւն և գործակցութիւն հաստատելու
Հասկացա՞ր:

ՄԱԳԹԱՂ.— Բայց դրա համար ի՞նչ կարիք կայ
ջգայնանալու և բորբոքուելու:

ՆԱՀԱՊԵՏ.— Ինչպէ՞ս չջգայնանամ, երբ ամէն մէկը
յամատութեամբ իր էշն է քշում, առանց միւսի կողմը
նայելու: Այսօր էլ այդ ապուշ Սաֆարովի հետ ի՞նչ կոխ
ունեցայ, եթէ տարիներով բնկեր եզած շինէինք՝ բարե-
տարն էլ շատ կը նկատէի նրա համար:

ՄԱԳԹԱՂ.— Ի՞նչ է պատահել:

ՆԱՀԱՊԵՏ.— Որտեղ է գործարանը փակել:

ՄԱԳԹԱՂ.— Եետո՞յ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ես, բնականաբար, խորհուրդ տուի
համաձայնութեան գալ բանուորներին հետ, մանաւանդ որ
նրանց պահանջներին մեծ մասը արդարացի է: Իսկ նա
(հեղձական) «սկզբունքային խնդիր» է դարձրել՝ ոչ մի
դիջում չանել, որովհետեւ բանուորները գործադուլի են
գլխելու Սաֆա՞րով և սկզբունք: Ելի դուրս:

ՄԱԳԹԱՂ.— Բայց Աշոտի հե՛տ ինչ ունեալ

ՆԱՀԱՊԵՏ.— Այն ունեմ, որ նա անհամաթիւններ շատ է անում այս գործում: Այսօր, երբ Սաֆարովի գրասենեակի լուսամտերից լուսւմ էի նրա գրգռիչ խօսքերը փողոցում հաւաքուած դորձագուլաւորներին հետ՝ քիչ էր մնացել դուրս դայի եւ ականջներէիցը մի պինդ քաշէի:

ՄԱԳԹԱՂ.— Էհ, տաքարիւն երիտասարդ է էլի: Ախրաքն էլ այդպէս չէ՞ր:

ՆԱՀԱՊԵՏ.— Այդպէս էր որ կերաւ է՛: Հագար անգամ ասացի՝ ա՛յ տղայ, խոհեմ եղի՛ր, ա՛յ տղայ, փորձանք կը բերես մեր գլխին . . . Դեռ լաւ է որ կէս ճանապարհին բռնուեցի: Եթէ ուտիկանապետի դէմ եղած մահափորձի ժամանակ արդէն բանտարկուած չլինէր՝ ասքով-գլխով կորած էր . . .

Զանգահարութիւն

Տ Ե Ս Ի Լ 7.

ՆՐԱՆԿ ԵՒ ԱՇԽԵՂ

ԱՇԽԷՆ.— Հայրիկ, այսօրուան երեք պարոններն հն:

ՆԱՀԱՊԵՏ.— Ներս հրաւիրիր:

ՄԱԳԹԱՂ.— Ի՞նչ սպասի՛ր, այս բաները դուրս տանենք: (Շտապով վերցնում է փուստիցն ու պակկները եւ շարժում դիպի աջ դուռը) Նահապետ, այդ շիշն ու գաւաթներն էլ դու բեր: (Նահապետի հետ միասին կրնում է աջ դուռով):

Տ Ե Ս Ի Լ 8.

ԱՇԽԵՂ, ԻՆՃ. ԱՂԱՌԱՐԱՎ,

ԱԿՈՓՈՎ ԵՒ ՌԱԳՐԱՄՈՎ.

ԱՇԽԷՆ (Միւսներից առաջ մտնելով).— Հայրիկը հիմա կը գայ, նստեցէք, խնդրեմ:

ԱՂԱՐԱՐՈՎ.— Շնորհակալութիւն, օրիորդ:

Թիւերը կ'ընում է աչ դռնով, իսկ միւսները սեղաւարում են բազկաթռակների վրայ:

Ա՛յնՓՈ՛վ (Կամաց Աղարարովին).— Կարծում է՞ք բան ա գուրու գալու սրանի՞ց:

ԲԱՂՐԱՄՈ՛վ (Կամաց).— Ճիշդն ասած, ես է՛նքան եմ բղղուել դրանց պահանջներին, որ ուզում եմ առանց այնուայնի լիկվիդացիա անեմ գործերս և զ՛նամ զազբանիցս (արտասահման):

ԱՂԱԲԱԲՈ՛վ (Կամաց).— Զազբանիցս զ՛նայր հեշտ է, Բուղդասն Սերդէյիչ, հունար՛ն այն է, որ Սաֆարովին չուրախացնենք Աչքներդ լա՛յն բաց արէք նա մեր գործարանների կանոններուն է սպասում, որպէսզի ինքը բաւարարութիւն տայ իր բանուարներին և ամէնքիս հէրն անիմի:

Յ Ե Ս Ի Լ Ս .

ՆՐԱՆՔ ԵՒ ՆԱՀԱՊԵՑ

ՆԱՀԱՊԵՑ (Մանկով աչ դռնից).— Ներեցէ՛ք, պարտնաներ, որ ձեզ փոքր ինչ սպասել տուի Բարե՛ւ, բարե՛ւ, այս ի՞նչ պատիւ է, որ գուք ինձ անում էք:

ԱՂԱԲԱԲՈ՛վ.— Ընդհակառակը, մեզ համար է մեծ պատիւ, որ ձեզ պէս պատուահասն մարդու յարկի տակ ենք զանուում:

ԲԱՂՐԱՄՈ՛վ.— Առաջները մէկ-մէկ հանդիպում էինք կրուրում Բայց քանի տարի ա, է՛նտեղ էլ չէք երեւում:

Ա՛յնՓՈ՛վ.— Երեւի ձեր որդուն պատահած դժբախտութիւնն ա պատճառը: Ո՛ւր ա հիմի, լաւ խաբարներ ունէ՞ք:

ՆԱՀԱՊԵՑ.— Երեք ու կէս տարի բանտերում քաշքշելուց յետոյ՝ մի ամիս առաջ արձակեցին: Յոյս ունենք, որ այս քանի որս կը վերադառնայ:

Ա՛յնՓՈ՛վ.— Դէ լաւ ա: Աստուած նոր փորձանքից հետո պահել:

776
1910

A II 2882



ԱՂԱԲԱԲՈՎ.— Պարոն նահապետեան, եկել ենք ձեզ մօտ մի խնդրով:

ՆԱՀԱՊԵՏ.— Աչքիս, յօնքիս, վրայ չբամայեցէք:

ԱՂԱԲԱԲՈՎ.— Երէկ այսպիսի մի գրութիւն ստացանք մեր բանուորներից (Մե՛նում ե բողոքը նահապետին, որ պիտում է այիկ անցրնել), նայնպիսի գրութիւններ ստացել են նաեւ Վարդապար Առաքելովիչը եւ Բուդդան Սերգէյիչը իրենց բանուորներից:

ՆԱՀԱՊԵՏ (Շարունակ քղրին նայելով).— Յետո՛յ:

ԱՂԱԲԱԲՈՎ.— Ինչպէս տեսնում էք, վաղը մամը Յ-ին լրանում է պայմանագրով, որից յետոյ բանուորները գործադուլ պիտի յայտարարեն, եթէ չընդունենք իրենց պահանջները:

ՆԱՀԱՊԵՏ.— Բայց ես ձեզ չեմ հասկանում . . . Ես ի՞նչ կապ ունիմ ձեր բանուորների հետ:

ԱՂԱԲԱԲՈՎ.— Մեր բանուորների հետ կապ չունէք, ի հարկէ, սակայն գործադուլի սպանալիքը նրանցից չէ գալիս, այլ ուրիշներից:

ՆԱՀԱՊԵՏ.— Ուրիշնե՞րն ովքեր են:

ԱՂԱԲԱԲՈՎ.— Հայ յեղափոխականների կոմիտէար:

ԲԱՂՐԱՄՈՎ.— Էդ մասին կատակ չկայ: Մեզ ամէն բան յայտնի ա:

ՆԱՀԱՊԵՏ (Ժպտալով).— Դուք երեւի կարծում էք, թէ ես էլ եմ պատկանում յեղափոխականների կոմիտէարին:

ԱՂԱԲԱԲՈՎ.— Ի՞նչ էք ասում, Պ. Նահապետեան, ինչպէ՞ս կարելի է, որ ձեզ պէս պատուաւոր մարդը յեղափոխական լինի . . . Սակայն մենք զիտենք, որ դուք մտնօթ էք այդ կոմիտէարի անդամների՝ եւ կարող էք նրանց վրայ ազդել:

ՆԱՀԱՊԵՏ.— Ուրեմն դուք ի՞նչ էք պահանջում ինձանից:

ԲԱՂՐԱՄՈՎ.— Մենք ոչինչ չենք պահանջում: Մենք խնդրում ենք միայն, որ դուք խօսք հասկացնէք էդ մարդկանց: Թող ձեռք քաշեն մեր բանուորներից եւ չխառ-

նունն մեր գործերի մէջ:

Այնօրով.— Էս էլ ասեմ Պ. Նահապետեան, որ խառնակիչներին անուն-անուն անաչում ենք, Եթէ ուզենանք, բայրբին էլ ձակք կը դնենք: Բայց զէ հայ ենք եւ չենք ուզում մեր ազգակիցներին վատութիւն անել:

ԲԱՂՐԱՄՈՎ.— Ընտրութան տասն, եթէ սրանք չլինեն (Մանանդում ե Ակոբովիս եւ Աղաբարովիս) ես ազգակից-մագակից չեմ հարցնի: Ի՞նչ ազգակիցներ են գրանք, որ մեր սախ տակը քանդում են: Ի՞նչ ա, մենք հայ չենք:

ԱՂԱՎԱՄՈՎ.— Հէնց որ մի կարիք է լինում, խկայն մեր գոնեքն են ձեռում. խկ երբ կարիքը վերանում է, մեզ դարձնում են բուրժուա եւ քարկոծում:

ՆԱՀԱՊԵՏ (Աղաբարովիս).— Իսկ երբ ձեր գոնեքը ձեռում են, գուք տալի՞ս էք:

Այնօրով.— Էյ տալն ի՞նչպէս ա լինում, արտեր: Տէրակը-վարդարտի՞ տալիս ենք: Զբօրնէ՛քին-Ջատիկն աւետիս են ման գալիս՝ չենք խնայում: Թատրոնի ըխէթ են բերում՝ տոնում ենք: Ստորական աղքատներն էլ հա կան ա. կան Որ հաչուէք՝ տարեկան մի հազարի չափ հէնց էս անապարհոյ ա դնում:

ՆԱՀԱՊԵՏ.— Բայց այդ հազարը, որ գուք տալիս էք, ձեր կարողութեան ո՞ր մասն է կազմում:

ԲԱՂՐԱՄՈՎ (Վրդարտած).— Դա ի՞նչ խօսք ա:

Այնօրով.— Ո՛ւմ ինչ գործն ա, թէ ես ի՞նչ կարողութիւն ունեմ:

ՆԱՀԱՊԵՏ.— Դա ձեր գործն է, ի հարկէ: Բայց երբ գուք տալուց էք խօսում եւ պահանջում, ոչ ձեր տուածը իրբեւ ազգասիրութիւն գնահատուի, գուք հաշուի առնում էք, թէ այդ մարդիկ, որոնց զէ՛մ բորբոքուած խօսում էք, իրենք ի՞նչ են տալիս ազգի համար:

ԲԱՂՐԱՄՈՎ (Գրգռուած).— Էս իմ ստեղծաւ են տալիս. ի՞նչ ունեն որ ինչ տան:

ՆԱՀԱՊԵՏ.— Ձէ՛, Բուզղան Սերգէյիչ, նրանք ձեր ստեղծը չեն տալիս, այլ իրենց կեանքն են տալիս ազգի համար, հասկանո՞ւմ էք, իրենց կեանքը:

ԲԱՂՐԱՄՈՎ.— Ո՞վ քույրաներում թրեւ եկող էդ լակոտները:

ՆԱՀԱՊԵՏ.— Այո՛, այդ «լակոտները» եւ իրենց բնկերները Դուք նրանց «թրեւ դալն» էք տեսնում. լակ քաշածնե՛րը Գիտե՛ք, թէ այդ «լակոտներից» քանի՞ քանիսն են մաշուել քանտերում եւ աքսորութեան մէջ: Գիտե՛ք որ հազարների են հասնում գրանց ընկերները, որոնք կախազանի վրայ կամ կոխներում զո՛հ բերին իրենց կեանքը սասկահայ եղբայրների ազատութեան համար:

ԱԿՈՓՈՎ.— Թո՛ղ հանդիստ վեր ընկնէին իրենց տեղը եւ զո՛հ չեթթային: Ո՞վ ասեղաւոր:

ՆԱՀԱՊԵՏ.— Ի՞նչպէ՞ս հանգիստ վեր ընկնէին, երբ թուրքն ու քիւրտը թալանում, ջարդում էին մեր եղբայրներին, տոհմանգում հայ կանանց եւ սղծում մեր կրօնական սրբութիւնները: Դուք ուրախ կը լինէի՞ք, եթէ այդ երիտասարդները հանգիստ վեր ընկնէին իրենց տեղը, երբ Բորչալուի թուրքերը, սրանից մի քանի տարի առաջ, ուզում էին քաղաքը ներխուժել եւ ձեր ձուխը մարել: Այն ժամանակ դուք ուրիշ երգ էիք երգում, Վարդապար Առաքելովի, այնպէս չէ՞: Այն ժամանակ դուք ազաւում-պազատում էիք, որ այդ «լակոտները» դան պաշտպանեն ձեր կեանքն ու գոյքը: Իսկ հիմա քանտով էք սպառնում նրանց: Սա արդարութիւնն է, սա մարդութիւնն է:

ԱԿՈՓՈՎ (Բաղրամովին).— Բանից դուրս աս գալիս, Բուդդան Սերգէյի, որ մեր մէջ ո՛չ արդարութիւն կայ, ո՛չ մարդութիւն: Պարզ աս, ուրեմն, որ ով ինչ ուզի, կարող ասանի մեզ հետ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ո՛չ, Վարդապար Առաքելովի, բանից այդ չէ դուրս գալիս:

ԲԱՂՐԱՄՈՎ.— Բա ի՞նչ:

ՆԱՀԱՊԵՏ.— Այն՛ որ դուք պէտք է հանէք ձեր սրտից ատելութիւնը եւ աշխատէք համաձայնութեան գալ այդ մարդկանց հետ: Մեր փրկութիւնը իրար հասկանալու մէջ է, Բուդդան Սերգէյի: Բայց ներեցէք ինձ: Սոսքի բնուէնցի եւ մտացայ, որ հազարից մի անգամ պատուել

էք իմ տունըր Թոյլ տուէք դո՛նէ մի դաւաթ կո՛նեակով
հրաւիրել ձեզ (Շարժում ե դեպի այ դուռը)։

ԱՂԱՐԱՐՈՒ.— Կարիք չկայ, Պ. Կա՛նապետեան նըս-
տեցէք մեր խոսքը վերջացնենք։

ՆԱՀԱՊԵՏ.— Ձէ, ինչպէ՞ս կարելի է Սա հայր տուն
է, վերջապէս (եղևում ե այ դուռով)։

ԲԱՂԱՐԱՐՈՒ. (Կանաց Աղաբարովին).— Յնդամի մէկն
ս կելի քո Կա՛նապետեանը։

ԱԿՈՓՈՒ.— Ի՞նչ ցնդած, օգիւշկարայ նրանցից ա

ԱՂԱՐԱՐՈՒ. (Կանաց).— Ձէ, սխալ էք, նրանցից որ
լինէր՝ քաղաքային բնորութիւններին չէին սեւցնի ուր-
դու խաթեր համար է, որ յարգում են։

ԱԿՈՓՈՒ. (Աղաբարովին).— Լաւ, սրանից ի՞նչ ես
սպասում մեր գործի համար։

ԱՂԱՐԱՐՈՒ.— Եթէ մի բան կարելի լինի անել՝ էլի
սրտ միջոցով է լինիբու թէ չէ Սաղարտի այքը լոյս։

ԲԱՂԱՐԱՐՈՒ.— Ախպէր, իմ խելքը սրանից բան չի
կարում։

Տ Է Ս Ի Լ 10.

ՆՐԱՆՔ ՆԱՀԱՊԵՏԸ ԾՌ ԱՇԽԷՆԸ

Աշխեր կոնեակի շիբ, գաւաթներ ես անուեղէնը սեղանի վրայ
է դնում ես կնում այ դուռով։

ՆԱՀԱՊԵՏ (Լեցնելով գաւաթները).— Մի-մի հաս
թրջենք կոկորչներս։

ԱՂԱՐԱՐՈՒ. (Ծիծաղով).— Լաւ թրջեցէք ձեր կո-
կորչը, սրպէսպի աշխարհի լափը նոր ուժով թափէք մեր
գլխին։

ՆԱՀԱՊԵՏ.— Ձէ, էլ վերջացաւ Հաւատացէք, որ
սիրտս շատ է վառուում, երբ հայերի մէջ սէրն ու միա-
բանութիւնը պակաս եմ տեսնում։ Դէ, ձեր կենացը Բա-
բով էք եկել մեր տունըր Յոյս ունիմ, որ սա վերջին ան-
գամը չի լինի (կնում ե)։

ԱՄԷՆՔԸ.— Ձեր կենացը (կնում են)։

ԱԿՈՓՈՒ.— Դուք էլ մի անգամ մեզ յիշեցէք Մեր

- դոներն էլ միշտ բաց են ձեր տոաջ:
- ԲԱՂՐԱՄՈՎ.— Ի հարկէ, ի հարկէ:
- ԱՂԱԲԱԲՈՎ.— Հիմա մի քիչ էլ մեր գործի մասին
խօսենք:
- ՆԱՀԱՊԵՏ.— Ձեր գործը շատ պարզ է, պարոններ:
- Պէտք է համաձայնութեան գաք բանուորներին հետ:
- ԱՂԱԲԱԲՈՎ.— Ինչպէ՞ս:
- ՆԱՀԱՊԵՏ.— Ձեր ունեւոր անելով:
- ԲԱՂՐԱՄՈՎ.— Այսինքն հագուստներս թողնենք
գործարանում և տկուր դուրս դանք է՞լի:
- ՆԱՀԱՊԵՏ.— Ձէ, ինչո՞ւ:
- ԱՂԱԲԱԲՈՎ.— Լաւ, կոնկրետ խօսելով՝ ի՞նչ ենք
անում:
- ՆԱՀԱՊԵՏ.— Ահա թէ ինչ: Ես այս դիշեր կը ծա-
նօթանամ այս թղթի մէջ գրուած պահանջներին: Վաղը
մինչև կէսօր կը տեսնուեմ մի երկու կարեւոր մարդկանց
հետ եւ կ'իմանամ, թէ բանուորները ինչ կ'տեսնուի կա-
րող են զիջել, Իսկ կէսօրին, ամէնքս միասին կը հաւաք-
ուենք Արտեմ Պետրովիչի գրասենեակը և կը խօսենք ինչ
հարկն է: Համաձայն էք:
- ԱՂԱԲԱԲՈՎ.— Համաձայն ենք:
- ՆԱՀԱՊԵՏ.— Սակայն, եթէ դուք արամադիք էք
յամառօրէն մերծելու բանուորներին բոլոր պահանջները,
աւելի՛ լաւ է այս գլխից ասէք, որպէսզի ես դուր տեղը . . .
- ԱՂԱԲԱԲՈՎ (Ոսթի եղնելով).— Ձէ, մենք յամաս
Ակոֆով (Ոսթի եղնելով).— Բայց դուք էլ մեզ չպի-
տի շատ դօր անէք:
- Հենք:
- ՆԱՀԱՊԵՏ (եմպոխով).— Ի՞նչ էք այդքան տընք-
տնքում, Վարդապար Առաքելովի: Աշխարհ գիտէ, որ ձեր
մէջքը շատ սլինդ է:
- ԲԱՂՐԱՄՈՎ (Ոսթի եղնելով).— Մի իրեն էլ հարցրու
է՞:
- ԱՂԱԲԱԲՈՎ.— Ուրեմն վաղը կէսօրին: Յետեւութիւն:
- Պ. Նահապետեան: Եստ ևւ շատ շնորհակալ ենք ձեր նե-
ղութիւններին համար:
- Ակոֆով.— Մենք նմանապէս:

ԲԱՂՐԱՄԲՈՒ.— Դէ, ձեզ տեսութիւն:

ՆԱՀԱՊԵՏ.— Մտեսութիւն, պարտններս Հիմա որ
մեր սան նանապարհն իմացար՝ յուսով եմ, որ... (Ես-
տելով ուղեկցում է մնացածներին նախասենեակ)

Տ Ե Ս Ի Լ 11.

ՆԱՀԱՊԵՏ, ՄԱԳԹԱՂ, ԱՇԽԷՆ

Նանապարհ մտնու է նախասենեակից, իսկ Մագրադը եւ Աշխեր
այ դռնից վերջին դուռն է տանում կսենեակն ու ամուսնուներ եւ նորից
վերադառնում:

ՄԱԳԹԱՂ (Նանապարհին).— Ի՞նչ էին ուզում:

ՆԱՀԱՊԵՏ.— Նորից քո Աշտարը Մի երէնու հայ գոր-
ծարան է մնացել, մինչև քահէնէ շտայ՝ չի հանդարտանա-
լու:

ՄԱԳԹԱՂ.— Էլի՞ գործադուլի խնդիր է:

ՆԱՀԱՊԵՏ.— Հատրտ ի՞նչ:

ԱՇԽԷՆ.— Հայրիկ, ինչո՞ւ ես խտանում այս տե-
սակ գործերն Ասանց այն էլ քո դէմ շատ են խօսում:

ՆԱՀԱՊԵՏ.— Ի՞նչ են խօսում, աղջիկս:

ԱՇԽԷՆ.— Ասում են, թէ դու կապխապխտաներին
պաշտպանութիւն ես անում:

ՆԱՀԱՊԵՏ.— Թո՛ղ սանն, աղջիկս, վրաս չունի:

ՄԱԳԹԱՂ.— Բայց քո օգուտն ի՞նչ է, որ քեզ հա-
մար քնում, ուրիշի համար երազ ես տեսնում: Դու ո՛ր
Ակոփոփն ու Բաղրամօփն ո՛ր:

ՆԱՀԱՊԵՏ.— Ամէն մարդ իր բժբանած ձեռով է կա-
տարում իր ազգային պարտականութիւնները: Ես էլ իմ
բժբանութեան ունիմ նրանց մասին:

Տ Ե Ս Ի Լ 12.

ՆՐԱՆԿ ՍԻ ՎԱՀԱՆԸ

ՆԱՀԱՊԵՏ (Վահանին, որ մտնում է նախասենեակից մի
գրէյի ձեռքին).— Լոյսը քեզ տեսողին: Այս ո՞ւր ես ամ-
բողջ օրը:

ՎԱՀԱՆ.— Մի փոքրիկ գործ ունէի, հայրիկ,

ՆԱՀԱՊԵՏ.— Ի՞նչ գործ,

ՎԱՀԱՆ (Այլի տակով նայելով Աշիկեհին).— Ընկերնե-
րիս հետ էի

ՆԱՀԱՊԵՏ.— Ի՞նչ ընկերնեք:

ՄԱԳԹԱՂ (Նահապետին).— Դու էլ ի՞նչ ես երախա-
յիս յետեւիցն ընկել, Իբ զասընկերի հետ է եղել. ուրիշ
ո՛ւմ հետ սլտաի լինէր:

ՆԱՀԱՊԵՏ (Մագրադին).— Այդպէս ասա, որ հասկա-
նամ է՞, Դու գիտես, որ ես հիմա ընկեր խօսքից մի քիչ
խորանում եմ. (Վահանին) Այդ ի՞նչ գիրք է ձեռքիդ. տո՛ւր
մի տեսնեմ: (Առնելով գիրքը նայում և վրան), Ըհը՞, սա
էլ . . . (Կարդում և) Կարլ Կառլսկի Սոցիալական յեղափո-
խութեան յաջորդ օրը՞: (Մագրադին) Այքո լո՛յս Եռստով
սա էլ Սիրաքի եւ Աշտի պէս առաւօտից մինչեւ երեկոյ
մեր զլուխը պիտի տանի. Մաքան այս ասեց, Էնդելման
այն ասեց, Միխայիլովսկին այսպէս, Լաւրովն այնպէս . . .
(Վահանին ցոյց տալով ձեռքի գիրքը) Ի՞նչ կապ ունի սա քո
վերաքննութիւնների հետ:

ՄԱԳԹԱՂ.— Իմ Վահանը վերաքննութիւններին
կտրուողը չի մ. քանի որ ազատ մամանակ ունի, լաւ է
անում որ ընթերցանութեամբ է պարապում և ոչ թէ ու-
րիշների պէս փողոցները շափչփում:

ՆԱՀԱՊԵՏ.— Ձի՞ կարելի արդեօք, որ իբ ազատ մա-
մանակը (Ճոյց տալով ձեռքի գիրքը) փոխանակ այսպիսի ծր-
տիւ պրտի բաներով գրադուելու՞ հայոց պատմութիւն սո-
վորի, որպէսզի իբ ազգի շարն ու բարին հասկանայ և ա-
պագային իբ մողղըզի համար օգտակարութիւն ունենայ:

ՄԱԳԹԱՂ.— Լաւ ես ասում, ի հարկէ, բայց մամա-
նակները փոխուած են Պէտք է մի քիչ էլ հիմակուան
երիտասարդների կամ ցով շարժուենք:

ԱՆԻՃՆ.— Հայրիկն ահասարակ չէ նկատում, որ
մենք այլեւս երէկուան երախաները չենք (Փառախախտով)
Ինձ հետ էլ, հայրիկ ջան, երբեմն այնպէս ես խօսում,
կարծես դեռ տասը տարեկան լինեմ:

ՆԱՀԱՊԵՏ (Շոյկերով Աշխենի մագերը).— Ճիշդ ես ա-
սում, ազջիկուս Երբեք չեմ կարողանում վարժուել այն
մտքին, որ դու արդէն օրիորդ ես դասուել Ինձ միշտ այն-
պէս է թւում, թէ դու գեռ այն պատի՛հ, պատի՛հ բա-
շիկն ես, որին այնքա՛ն հաճոյքով դրկիս մէջ օրօրում
էի, որպէսզի քնացնեմ: Գիտե՛ս ինչ լացկան անպիտանն
էիք: (Քեմօրեմ համբուրում է Աշխենին):

Զանգահարութիւն

ՄԱԳԻՔԱՂ.— Վա՛հան ջան, . մի սեւ . . . (Վահանը
մտնում է նախասենեակ):

ՎԱՀԱՆ (Նախասենեակում).— Վա՛յ, Սիրաքը . . .

ԱՇԽԵՆ (Նեւտուելով նախասենեակ).— Սիրա՛քը, Սի-
րաք եղբայր . . . (Վազում է նախասենեակ):

. . . S E U B I , 13 . . .

ՆՐԱՆԿ, ԱՐԲԱՔԸ ԵՒ ԱՆԱԼՔԸ

ՈՐԻՎԲ (Հանդիպելով Մայրապիև նախասենեակի շե-
քին՝ ձգում է անասարհորդական պայտասեր և նկատում Մագ-
րապի գիւղը).— Մայրի՛հ . . . (Դառնալով դեպի Նահապետը
և գրկախառնուելով հետը) Հայրիկ ջան, էլի նոյնն ես մնա-
ցել. իսկ դրում էիք թէ . . . (Իրկելով Աշխենի մեջքը և համ-
բուրուելով հետը) Մի սքա՛ն նայեցէք. կատարեալ օրիորդ
է դասուլ . . . (Դառնալով դեպի Վահանը) Իսկ մեր այս ճու-
տիկը. սեռէք ի՛նչ հասակ է սուս: (Ջեմօրեմ համբուրում
է), Մայրիկ, չես նեղանայ անշուշտ եթէ ստեմ, որ բան-
տի մէջ ամենից շատ այս անպիտանին էի կարօտում:
(Նորից համբուրում է Վահանին):

ՄԱԳԻՔԱՂ (Այնորը արևելով).— Ինչո՞ւ պիտի նեղա-
նամ, որդի՛: Տան պղտիկը միշտ ամենից քաղցրն է վի-
նում:

ՆԱՀԱՊԵՏ (Նայելով դեպի Անանիայի կողմը, որ կանգ-
նած է շուարած վիճակի մեջ).— Վա՛հ, Անահիտն էլ այս-
տեղ է եղել: (Մօտնում է և գրկում նրա մեջքը) Դո՛ւ որ-

տեղից լոյս քնկարս

ԱՆԱՀԻՏ (Շփոքրամ) .— Ես . . .

ՄԻՐԱՔ .— Պատահաբար կառքս սրանց փողոցով անցաւ, ասացի լաւ կը լինի Անահիտին էլ հետո առնեմ :

ՆԱՀԱՊԵՏ (Հեզկիակն խնդրով) .— Ա՛խ անպատան կատաղան, որ չգիտէ էլ, թէ կայաբանից այստեղ գալու համար, հարկ չկայ ահագին շքան անել մինչեւ Անահիտենց փողոցը . . .

ՄԻՐԱՔ (Միծաղելով) .— Չէ, հայրիկ, ճշմարտան ասաց . . .

ՄԱԳԹԱՂ .— Լաւ ես արել որդի, որ Անահիտին էլ բերել ես (Համբարծով Անահիտին) Գո այքս էլ լոյս աղջիկս Գո հողիչ էլ բերանդ ելաւ, այնքան սպասեցիր ԱՇԽԶՆ (Սիրայիմ) .— Բայց խկապէս, ինչո՞ւ այդքան ուշացար :

ԱՆԱՀԻՏ .— Երևի որոշել էր մի քիչ թանկ ծախել իրեն :

ՄԻՐԱՔ .— Ի՞նչ թանկ ծախել, Անահի՛տ, վերջին երկու շաբաթը ուղղակի շունչ քաշելու ժամանակ չունէի :

ՆԱՀԱՊԵՏ .— Ի՞նչ կար որ :

ՄԻՐԱՔ .— Մի քանի առկախ մնացած գործեր կային Թոստովում եւ Վլատիկավկազում . . .

ՆԱՀԱՊԵՏ .— Էլի «գործեր», Այս երեք տարուան մեր քաշածները բաւական չեղան :

ՄԱԳԹԱՂ (Նամակներով) .— Լա՛ւ, դու էլ մի՛ սկսիր :

ՆԱՀԱՊԵՏ .— Ի՞նչպէս չսկսիմ, այ կ'սիկ, չես տեսնո՞ւմ, որ դեռ բանտի հտը վրայից չթօթափած, էլի «գործեր» մասին է խօսում :

ՄԻՐԱՔ (Զուարթ) .— Լաւ, հայրիկ, այսօր այլ եւս գործերից չեմ խօսի : Ուրիշ բաներից հարցնենք : Է՛, Վահան ջան, ինչո՞ւ չես խօսում : Երկու տարի մնաց մինչեւ աւարտելը, այնպէս չէ՞ :

ՎԱՀԱՆ .— Այո՛, Միրաք եղբայր, Բայց դա հետաքրքրական չէ : Աւելի լաւ է, մի քիչ քո բանտային կեանքից պատմիր :

ՄԻՐԱՔ. — Ի՞նչ պատմեմ:

Վ.ՀԱՆ. — Ա՛յ, օրինակ, թէ քաղաքական բանաստեղծականն ինչպէ՞ս են թխթխեացնելով խտու՛մ իրար հետ՝ սենեակից-սենեակ . . .

Իրոք ազգային ճայճեք ե՞ն լուսմ, որ մեր սասկանում ե՞ն եւ մեր ճարտմ Աճճեր տարած ի՞նք ե՞ն նայմ:

ԶԱՅՆԵՐ (Լուսամուտներէ շակ). — «Եւդ ո՛ւր են զագում աչգպէ՛ս»: «Վարդիբ տեսնենք»: «Հորիզո՞ն»: «Մշա՛կ»: «Բարձրագոյն մանիթնաս»: «Այ տղայ, մի թերթ տուր» . . .

ՆԱՀԱՊԵՏ (Մօտենալով լուսամուտին). — Ի՞նչ է այս:

ՄԻՐԱՔ. — Վահան, մի հաս «Հորիզոն» բերնու (Մօտենում է մյուս լուսամուտին եւ հակում դեպի փողոց: Վահանը վագելով մեկում է նստասենեակի, ելուչ ազնուկ փողոցում):

ՆԱՀԱՊԵՏ (Թիրախին). — Ի՞նչ պէտք է լինի սա:

ՄԻՐԱՔ. — Ոչինչ չի հասկացու՛մ: Ազմուկը կարճեա թէ քաղաքային հրատարակի կողմից է գալիս (Ազնուկը ասուխանում է):

ԶԱՅՆԵՐ (Լուսամուտներէ շակ). — «Բարձրագոյն մանիթնաս զօրածողութի մասին»: «Հորիզո՞ն»: «Մշա՛կ»: «Զօրածող»: «Պատերազմ»: «Պատերազմ է, պատերազմ» . . .

ՆԱՀԱՊԵՏ. — Պատերազմ, Ո՞վ, Ո՞ւմ դէմ:

ՄԱԳԹԱՂ (Անհանգիստ). — Ի՞նչ եղաւ Վահանը:

ԱՇԽԷՆ (Խնդախով). — Կարճում ես պատերազմ տարան:

ՏԵՍԻԼ 14.

ՆՐԱՆԻՍ ՍԻ ՎԱՀԱՆԸ

Վ.ՀԱՆ (Շնչահաս ներս ընկնելով նստասենեակից՝ բերքը ձեռքին). — Սոսկալի բան է: Ռուսաստանը, Ֆրանսան, Գերմանիան եւ Աւստրո-Հունգարիան պատերազմի մէջ են: Թշնամական զօրծողութիւններն արդէն սկսուած են սահմանների վրայ . . .

ՆԱՀԱՊԵՏ (Խնդով բերքը Վահանի ձեռքից). — Ի՞նչե՛ր

ևս ասուճ, ա՛յ աղայ: (Բողոքն էլ, բացի Մագրայից, հաւաքուով են նահապետի շուրջը ևւ աշխատում կարգալ բերքը),

ՄԱԳԹԱՂ.— Սիրտս հատաւ Մի բան ասացէք իմանաճ է՛:

ՆԱՀԱՊԵՏ (կոր ստածում).— Էլ ի՞նչ ասենքս Աշխարհն իբար է ա՛նցել . . .

ՄԱԳԹԱՂ (Այնքը Երկինքի յառելով ևւ դիմել խաչակնիկի).— Տէ՛ր Աստուած . . . Տէ՛ր Աստուած . . .

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԸՐ

Քե՛ք ներկայացնում է ընդունարան, որ միևնոյն ժամանակ աշխատանքի կարիճն է:

Խորքի պատից մի դուռ բացուում է ղեկի նստասենեակը, այ պատից մի դուռ՝ ղեկի Մագքաղի եւ նահապետի սենեակը եւ ձախ պատից մի դուռ՝ ղեկի բնակարանի միւս մասերը:

Խամաւորութիւնը նոյնն է, ինչ որ նախորդ արարում՝ այն արարութեամբ, որ ձախ պատի կողմը, նախարեմին մօտ, դրուած է մի գրասեղան, իր թիկնարանով, բարձրի կազովով եւ այլ գրեցական պարագաներով:

Գասերի վրայ Բաճճիի, Քրիստափոր Միխայելեանի, Ս. Զաւարեանի, Փ. Փռէշի եւ Միխայիլովիի նկարները:

Ց Ե Ս Ի Լ Ի.

Իրատեղանի տարրը նստած են **ՍԻՐԱՊ, ԱՇՈՑ, ՎԱՐԴԱՆ** եւ **ԿՈՒՇԵՆՆ**:

ՍԻՐԱՐ (Վերցնելով սեղանից մի գրութիւն).— *Օրակարգի վերջին խնդիրն է Բիւրօյի շքաբերականը բոլոր շեւիկների դուռերի շուրջ, որ քիչ առաջ կարգացրինք: Ի՞նչ կ'ստէք այս մասին:*

ՄՈՒՇԵՆՆ.— *Սա այն կ'ստէի, որ եթէ Բիւրօն մասնակիւն կարուկ հրահանգներ տար բոլոր շեւիկների դէմ՝ նրանց շարագործութիւնների ծայրն այսօր զօրքին չէր հասնի:*

ՎԱՐԴԱՆ (Մուշեղիմ).— *Մեր կուսակցութեան յեղափոխութեան աւանդութիւններն աչքի առաջ ունենալով՝ Բիւրօն ի հարկէ չէր կարող տալ քո ակնարկած կրթութեւ հրահանգները. բայց սա չէ նշանակում թէ նա ան-*

տարբեր է եղել զէպի բուլնիկեան դաւերը

ՍԻՐԱՔ (Մուշեղիկ)։— Ճիշդ է ասում ընկ. Վարդանը, Այս ամառուան մեր այնքան յաջող պայքարը բուլնիկեանքի դէմ, Բիւրոյի հրահանգով չեղանք։

ՄՈՒՇԵՆ (Սիրաբիկ)։— Դու էլ շատ ես ուսեցնում այդ պայքարի նշանակութիւնը

ԱՇՈՏ։— Ուսեցնելը ո՞րն է։ Մինչև անգամ Վահանը, որ չէր քաջուում միտինդներում յայտարարել, թէ Դաշնակցութեան շէքերին պէտք է կախել տայ պալատի սիւներից՝ ծախել է իր պոչը, Բաղրամյան զինուորանոսը գլխաւելու անյաջող փորձից յետոյ՝ նա այլևս հրապարակով չի երևում։

ՄՈՒՇԵՆ (Աշոտիկ)։— Ճիշդ է, հրապարակում չէ երևում, բայց տեղւոյս մեր հրացանակիր դնդի մէջ, դեռ մի քանի օր ասաջ, նա էր դրդում զինուորաներին, որ գնդակահարեն հայ սպաներին։ (Սիրաբիկ) Ինչպէ՞ս է որ դու չես կարողանում ազդել այդ տղայի վրայ

ՍԻՐԱՔ։— Այնպէս է տարուած բուլնիկեան դաւ դափարներով, որ նոյնիսկ Լեւինը չի կարող դառնել նրա մտքնանդութիւնը

ՎԱՐԴԱՆ։— Ձի՛ կարելի արդեօք նրան մի կերպ հետացնել այստեղից

ԱՇՈՏ։— Արդէն իր ընկերները որոշել են, ինչ որ գործով, նրան Հիւսիսային Կովկաս դրկել, Այս էլ պէտք է ասեմ, որ Վահանը խորքով վատ տղայ չէ, նա կատաղի է իրբև հակառակորդ, որովհետև շատ անկեղծ է իր համոզմունքների մէջ և շատ ուժեղ տեմպերամենտ ունի։ Եթէ նրա պայքարը մեր դէմ յաճախ տղեզ ձևեր է ասնում, դա պէտք է բացատրել Գեղամի և Նրա նման մի քանի բուլնիկեանքի աղդեցութեամբ, որոնք սրբութիւն չեն նանաջում ո՛չ անհատական և ո՛չ էլ հանրային գործերի մէջ։

ՍԻՐԱՔ։— Լա՛ւ, դառնանք մեր գործին, Բիւրոյի շրջաբերականի մասին ուրիշ ասելիք ունի՞ք (Լուսիկ) Չու՛նիք, Ուրեմն կը հաղորդենք Ձինուորական Մարմին

և կամ խաղէնքերին ի դորձադրութիւնս Օրակարգի հարցերը սպասուած են:

ՎԱՐՎԱՆ.— Չմոտանաս, որ Պ. Նահապետեանը քիչ ասաջ պանկութիւն յայանեց մի երկու բոսէով մեզ հետ խօսելու:

ՄԻՐԱՔ.— Այո՛ Ստեփան Նախապէս սրտինք մեր այսօրուան անելիքները: Ընկ. Աշոտ, այս երեկոյ Կ. Կ.ի կողմից դու պիտի մասնակցես Բիւրօյին նիստին:

ԱՇՈՏ.— Ինչո՞ւ ոչ դու:

ՄԻՐԱՔ.— Որովհետև երեկոյեան նորից պէտք է հանդիպել երգնկայից եկած սպաներին:

ԱՇՈՏ.— Իսկ Բիւրօյի օրակարգի վրայ ի՞նչ հարցեր կան:

ՄԻՐԱՔ (Վերցնելով քուրք անանից).— Կարեւոր հարցերն են՝ հայկական կորպուսի կազմակերպութիւնն արագացնելը և թուրքահայ աւստահայ Ազգային Խորհուրդներին միջև օրդանական կապ հաստատելը: Միւս կէտերը կազմակերպական մանր-մունք հարցերի են վերաբերում: (Օրակարգը չալով Աշոտին) Կարգա՛ եւ տե՛ս:

ԱՇՈՏ (Առնելով քուրքը).— Լաւ:

ՄԻՐԱՔ.— Իսկ դու, ընկ. Մուշեղ, գրիբ անմիջապէս Ջաւէնին, Տիգրանին և Խորէնին, որ կիրակի օրը անպատճառ այստեղ լինեն՝ լրիւ կազմով Կենտրոնական Կամիտէի նիստ աւանդու համար:

ՄՈՒՇԵՂ (Նայելով քնի ժամացոյցին).— Հիմա պէտք է անմիջապէս Խորհուրդներին նիստին գնամ, նիստից յետոյ կը գրեմ:

ՎԱՐՎԱՆ (Մուշեղին).— Ձէ՞ որ այսօր Խորհուրդներին օրը չէ:

ՄՈՒՇԵՂ.— Այո՛, բայց ժամը հինգին արտակարգ նիստ է նշանակուած՝ ինչ որ խիստ կարևոր խնդրով:

ՄԻՐԱՔ.— Լա՛ւ Մենք էլ, ընկ. Վարդան, գնանք տեսնենք, թէ ի՛նչ վիճակի մէջ են թիւ 4 զինապահեստի աշխատանքները: Աշոտ, կ'ուզե՞ս մեզ հետ գալ:

ԱՇՈՏ.— Ո՛չ, չեմ կարող:

ՍԻՐԱՔ.— Ի՞նչ ունիս որ . . .

ԱՇՈՏ.— Պէտք է հիմա դնամ Աբրահի տեղափոխութեան խնդիրը կարգադրեմ:

ՍԻՐԱՔ.— Մի՞թէ Աբրահը դեռ քեզ մօտ է պահուում:

ԱՇՈՏ.— Այո՛:

ՍԻՐԱՔ.— Աչո՛տ, ես քեզ ուղղակի չեմ հասկանում: Անցեալ օրուան քո եւ Մուշեղի այնքա՞ն ցաւալի վէճից յետոյ . . .

ԱՇՈՏ.— Սիրելիս, ես ի՞նչ անեմ, որ չկարողացայ յարմար թաղստոց գտնել: Հօ չէի կարող նրա փողոց նետեւ, որպէսզի Գուրամաշխիլներն իրենց նպատակին հասնէին . . .

ՎԱՐԴԱՆ.— Ծիշդն ասած, չեմ հասկանում, թէ ի՞նչ է ներկայացնում այդ Աբրահը, որ մենք նրա պատճառով այսքան գլուխ ենք ցաւացնում:

ԱՇՈՏ.— Ընկ. Վարդան, դու նախ դիտես, որ Աբրահը իմ մանկութեան ընկերն է: Մենք զբեթէ մի յարկի տակ ենք մեծացել: Եւ յետոյ՝ նա մէկն է այն սակաւաթիւ բազմախնայից, որոնց հետ կարող ես մարդու պէս նստել, խօսք ասել և խօսք լսել: Ինքզ էլ շատ դո՛ւ էիր չէ՞, որ Աբրահն արգելում էր իր ընկերներին՝ բազմախնայեան պրոպագանդ մղել հայկական դաւառներում՝ նկատի ունենալով հայ ժողովրդի բացառիկ վիճակը և ազգային ինքնապաշտպանութիւն կազմակերպելու անհրաժեշտութիւնը:

ՍԻՐԱՔ (Աչոսին).— Բայց դու վերջ ի վերջոյ ի՞նչ ես մտածել Աբրահի մասին: Նրան ոչ մի պայմանով քեզ մօտ պահել չի կարելի: Ի՞նչ թոււմ է, թէ Գուրամաշխիլն հոտ է առել նրա թաղստոցի մասին:

ԱՇՈՏ.— Այսօր ամէն ինչ կը կարգադրուի:

ՍԻՐԱՔ.— Հաստա՞տ:

ԱՇՈՏ.— Հաստատ:

ՍԻՐԱՔ (Շարժուելով դեպի աջ դուռը).— Հիմա տեսնենք, ի՞նչ է ուղում ասել մեր հայրիկը:

ԱՇՈՏ.— Իմ ներկայութիւնն անհրաժեշտ չէ. Ես գիտեմ, թէ Պ. Նահապետեանն ինչի մասին պիտի խօսի, և կատարելապէս համամիտ եմ նրա առաջարկներին, Թոզէ՛ք ևս դ՛նամ այս տեղափոխութեան գործը վերջացնեմ:

ՍԻՐԱՔ.— Ինչպէս կ'ուզես:

ԱՇՈՏ.— Ուրեմն ցտեսութիւնս (Ելնում և նախանկենակ):

ՍԻՐԱԿ (Աջ դռնից ներս՝ կանչելով).— Հայրի՛կ . . .

ՆԱՀԱՊԵՏ (Ներսից).— Այս բոլէիս: Մի վայրկեան միայն:

ՎԱՐԴԱՆ (Սիրաֆիմ, որ վերադառնալով նստում և իր շեղը).— Նկատու՛մ ևս, թէ վերջին տարուան ընթացքին ի՛նչ «անտանտ կորդիալ» է ստեղծուել Աշոտի և Հայրիկի միջև:

ՍԻՐԱՔ (Ժպտալով).— Այո՛, Եւ երեւակայիբ, որ հայրիկս հիմա ամէ՛նքից շատ Աշոտին է հաւանում:

ՄՈՒՇԵՂ.— Չեմ զարմանում, որովհետեւ ընկ. Աշոտը կատարեալ «ազգայինջի» է դառել . . .

Տ Ե Ս Ի Լ Զ.

ՆՐԱՆՊ ՍԻ ՆԱՀԱՊԵՏ

ՆԱՀԱՊԵՏ (Մտնելով աջ դռնից, ձեռքի թղթեր).— Վերջացրիք ձեր գործը, հա՛:

ՍԻՐԱՔ.— Այո՛, հայրիկ, միայն նախազգուշացնում եմ, որ շատ ժամանակ չունենք մեր տրամադրութեան տակ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ես ձեզ երկար չեմ զբաղեցնի Միայն երկու խոնդիբ ունիմ գնելու ձեր առաջ:

ՎԱՐԴԱՆ (Ժպտալով).— Տեսնենք էլ ի՛նչ հետաքրքրական հարցեր է արծարծելու մեր սիրելի Պ. Նահապետեանը:

ՆԱՀԱՊԵՏ.— Առաջին հարցս է, որ դուք ձեռննաւ մարտիկ ուժեր զբի՛ք Բայազէտ, Խնուս և Բուլանջիս՝ տեղական փոքրաթիւ խմբերն ուժեղացնելու:

ՍԻՐԱՔ.— Ինչո՞ւ համար

ՆԱՀԱՊԵՏ.— Դասալքութիւնը ուսական զօրքերի մէջ օր ըստ օրէ մեծ չափեր է աճում, և դասալիքները յաճախ անկարգութիւններ են աճում մեր նորակազմ դիւղերում: Եթէ այսպէս շարունակուի՝ մեր վերաշինական աշխատանքները լըջօրէն կը խանգարուեն:

ՎԱՐԴԱՆ.— Իսկ այդ աշխատանքները ներկայիս ի՞նչ աստիճանի վրայ են գտնուում:

ՆԱՀԱՊԵՏ.— Այն աստիճանի վրայ, Պ. Վարդան, որ Հայաստանը մեր աչքի առաջ յարութիւն է աճում աւելորակների միջից: Միայն Արաշկերտում այս բույէիս աւելի քան 30,000 հայ է հաստատուած: Նոյնքան Ուսուսում: Նոյնքան Վանի շրջանում: Դիադինը, Բասէնը, Կարնոյ դաշտը, Դեղջանը, Երզնկան նոյնպէս հետզհետէ վերակենդանանում են: Եթէ այսպէս գնայ՝ մինչև մի տարին մենք զբաւած հայկական նահանգներում 200-300 հազար հայ բնակչութիւն կ'ունենանք: Սա գիտէ՞ք ինչ է նշանակում:

ՎԱՐԴԱՆ (Ժպտալով).— Ի՞նչ:

ՆԱՀԱՊԵՏ.— Սա նշանակում է մի հարուածով ի չիք դարձնել թէ՛ Ինվէր-Քալաթեան ծրագիրը և թէ «նորատեան Կոպկոթեան» դաւերը:

ՍԻՐԱՔ.— Շատ լաւ Բո երկրորդ հա՞րցը որն է՝

ՆԱՀԱՊԵՏ.— Երկրորդ հարցն է, որ դուք վերակենդանացնէք «Մի հայը մի ոսկի» ֆոնդի գործունէութիւնը, որպէսզի կարողանանք շարունակել հայ գերիների ազատադրութիւնը:

ՄՈՒՇԵՂ.— Բայց մենք ի՞նչ կարող ենք անել: Ծանօթ գործունէութեան համար դրամ է պէտք, իսկ դրամը մեզ մօտ չէ գտնուում, այլ հայ հարուստների մօտ:

ՆԱՀԱՊԵՏ.— Այդ այդպէս է անշուշտ: Սակայն մինչև որ դուք, գաշնակցականերդ, այս գործի շուրջը հանրային տրամադրութիւն չստեղծէք, հայ հարուստից դրամ քաշելը դժուար է լինելու:

ՎԱՐԴԱՆ (Ժպտալով).— Վերջապէս Պ. Նահապետեանը

խառնութանց, որ մենք՝ դաշնակցականներս էլ մի բանի պէտք ենք:

ՆԱՀԱՊԵՏ.— Անարդար մի՛ լինէք, Պ. Վարդան, ես երբեք չեմ ուրացել ձեր օգտակար գործերը: Ասկայն, շանի որ խոսքը տեղը եկաւ՝ թոյլ տուէք ասելու, որ ձեր մի ընթացքը ինձ գուր չի գալիս:

ՎԱՄԻԱՆ.— Ո՞ր ընթացքը:

ՆԱՀԱՊԵՏ.— Այն՝ որ գուր շատ էք պողահարում հայ բուլեիկներին:

ԲՈՒՇԵՂ. (Կիսառնկանով) .— Ի՞նչ կ'ուզէիք որ անէինք:

ՆԱՀԱՊԵՏ.— Պէտք է աշխատէք մի կերպ հասկացողութեան դալ նրանց հետ:

ԲՈՒՇԵՂ.— Ի՞նչպէ՞ս հասկացողութեան զանք, երբ նրանք պահանջում են, որ կառավարութիւնը հանէ զօրքերը Տանկահայաստանից, շրջակայի (Մաղրանիս) ատանց աննեկիտայի և ատանց կոնարբիբուցիտայի՝ հաշտութիւն կնքուի Տանկաստանի հետ:

ՆԱՀԱՊԵՏ.— Եթէ մի քիչ մտերմօրէն խօսէք հայ բուլեիկներին հետ, կարելի կը լինի նրանց հասկացնել, որ այդ պահանջը տնաքանդութիւն է մեզ համար: Նրանց մէջ մի քանիսին դիտեմ, որոնք, հաւատացնում եմ ձեզ, ամէնքիս պէս հայ են և հայ ժողովրդի վիճակով նայնքան են մտահոգուած, որքան գուր եւ ես:

ՎԱՄԻԱՆ.— Օրինակ:

ՆԱՀԱՊԵՏ.— Օրինակ՝ Պ. Արտակը:

ԲՈՒՇԵՂ. (Գրգռուած) .— Հէնց այդ Արտակ կոչուածն էր չէ՞, որ Սարիգամիչում և Երզրումում գրգում էր զօրքերին՝ դէն ձգել զէնքերը եւ վերադառնալ իրենց տուները:

ՆԱՀԱՊԵՏ.— Սխալուում էք, Պ. Մուշեղ: Հաստատ դիտեմ, որ Արտակն այդ կողմերը գնաց արդիւիւու համար իր ընկերներին, որոնք այդպիսի յիմարութիւններ չին անում:

ԲՈՒՇԵՂ.— Ասկայն, հայրիկ, դու ի՞նչ օգուտ ես

ակնկալում մեր եւ հայ բողոքականներէ մերձեցում ից:

ՆԱՀԱՊԵՏ.— Հէնց թեկուզ այն օգուտը, որ այս վտանգաւոր ժամանակներում, մեր ուժերը չեն ջլատուի ներքին կոխներով:

ՍԻՐԱՔ.— Էլ ուրիշ հարց չունի՞ս, հայրիկ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ո՛ւ:

ՍԻՐԱՔ.— Լաւ Քանի որ դրածդ երկու հարցերն էլ մեր Բիւրօյի իրաւասութեան մէջ են մտնում, ես կը յանձնարարեմ Աշոտին, որ այս երեկոյ խօսի նրանց մասին Բիւրօյի նիստին, իսկ վաղը քեզ պատասխան կը տանք (Ոսֆի եղնելով) Հիմա մենք պէտք է զննանք (Ելնում է նախասենեակով):

ՎԱՐԴԱՆ.— Յաւատութիւն, Գ. Նահապետեան (Ելնում է Մուշեղին հետ միասին):

ՆԱՀԱՊԵՏ (Կարգի քերելով իր քրքերը).— Յաւատութիւն, պարոններ:

Յ Ե Ս Ի Լ Ց.

ՆԱՀԱՊԵՏ ՍԻ ՄՅԳԹԱՂ

ՄՅԳԹԱՂ (Մտնում է աջ դռնից՝ հագնուած ելնելու համար եւ գնումների պայուսակը ձեռքին).— Գնացի՞ն:

ՆԱՀԱՊԵՏ (Զրպարելով իր քրքերով).— Այո՛:

ՄՅԳԹԱՂ.— Իսկ դու տո՞ւնն ես մնալու:

ՆԱՀԱՊԵՏ.— Մինչև երեկոյ տունն եմ:

ՄՅԳԹԱՂ.— Երեկոյնա՞ն ինչ ունիս:

ՆԱՀԱՊԵՏ.— Գ. Մարտիրոսեանի մօտ եմ վիճելու:

ՄՅԳԹԱՂ.— Ի՞նչ կայ որ:

ՆԱՀԱՊԵՏ.— Մի մասնաւոր խորհրդակցութիւն է նշանակուած նրա մօտ՝ մեր կուսակցութիւնների մէջ սկսած անհամութիւններին վերջ տալու համար:

ՄՅԳԹԱՂ.— Եթէ այդ կարգի շնորհք ունես՝ նախքո տանը վերջ տուր կուսակցական անհամութիւններին:

ՆԱՀԱՊԵՏ.— Շատ են բարձրում իրար, հա՞:

ՄՅԳԹԱՂ.— Բարտեւլն էլ ինչպէ՞ս է վիճում, Երբ

Սիրաքն ու Վահանը վէճի են բռնուում՝ կարծես թշնամի բանակներ լինեն իրար դէմ կանգնած:

ՆԱՀԱՊԵՏ.— Բանի որ մեծերն են իրար ոտքի տակը փորում, ջահիլներից ի՞նչ պահանջես իսկ դու ո՞ւր ես այդպէս սարքուեր:

ՄԱԳԹԱՂ.— Գնամ տեսնեմ ի՞նչ եմ նարում ընթրիքի համար: Բանդուեն այսպիսի ժամանակները. գրամը գրպանումդ՝ ամէն բանի հասրաթ ես մտում:

ՆԱՀԱՊԵՏ.— Ասում են թէ կօօպերատիւում լաւ բրինձ է ստացուած: Աշխէնին կամ Վահանին զրկիր, մի քիչ էլ մեզ համար բերեն:

ՄԱԳԹԱՂ.— Ինչ էլ բա՞ն ասացիր: Մի ժողովից դուքս են գալիս՝ միւս ժողովը խցկուում: Նրանց հետ այսպիսի բաների մասին խօսիլ կը լինի՞:

ՆԱՀԱՊԵՏ.— Ի հարկէ չի լինի (ժողովելով քրքերը): Մարդիկ յեղափոխուիլուն են խորացնում: Եւ այնքան պիտի «խորացնեն», որ ամէնքս էլ խորխորատի մէջ ընկնենք: (Ելնում են Մազրազը նախասենեակ, իսկ Նահապետը՝ աջ դռնով):

Դ Ա Ց Ա Բ Է Բ Ծ Մ

Տ Ե Ս Ի Լ Է

Մօտում եմ ձախ դռնից ԱՆԱՀԻՏԸ՝ կարծես մեղքի եւ ԱԵԻՆԷՆԸ՝ մի գիրք մեղքի:

ԱՇԽԷՆ.— Բայց մի՞թէ քեզ համար անսպասելի էր այդ պատմութիւնը:

ԱՆԱՀԻՏ.— Մի քիչ այո: Որովհետեւ ինձ թւում էր, թէ դու Աշտոին աւելի ես հաւանում, քան թէ Արտակիլն:

ԱՇԽԷՆ (հնդախօսով).— Սկզբում իբօք որ այդպէս էր. բայց պատերազմից ի վեր նա այնքան է փոխուել, որ անճանաչելի է դարձել:

ԱՆԱՀԻՏ.— Ինչո՞վ է փոխուել:

ԱՇԽԷՆ.— Իր հայեացքներով: Ինչն՞ էր էր քաղաքում ստաջ եւ ի՞նչ գործերի վրայ է հիմա . . .

ԱՆԱՀԻՏ.— Ես, ճիշդն ասած, այլ կարծիք ունիմ
Աշտի մասին: Բայց ի հարկէ գու եւ Արտակը իրար ա-
ւելի լաւ կը հասկանաք, քանի որ միևնոյն գործին էք
ծառայում, Այս տեսակէտից՝ քո ընտրութիւնը միանգա-
մայն ողջունելի է:

ԱՇԽԷՆ.— Միայն այ՞դ տեսակէտից

ԱՆԱՀԻՏ.— Ո՛չ, Արտակը իրբեւ անձնաւորութիւն
էլ շատ համակրելի է: Բայց, այսու հանդերձ, կրկնում եմ,
Աշխէն, որ եթէ Սիրաքն իմանայ, թէ Արտակը գեո եւս
Աշտի մօտ է պահուում, շատ կը բարկանայ Դու զիտես,
որ անցեալ օրը այս հարցի շուրջը մեծ անախտութիւն
է եղել ընկերներէ մէջ:

ԱՇԽԷՆ.— Այո՛, պէտք է այդ մասին մի կարգա-
գրութիւն անել:

Տ Ե Ս Ի Լ Տ . ՆՐԱՆՊ ԵՒ ՎԱՀՍՆԸ

ՎԱՀԱՆ (Մսնեղով եպիսոպոսակոյց).— Հը՛, ի՞նչ էք
քչփչում հարս ու տալ:

ԱՆԱՀԻՏ.— Քչփչողը գու ես, անպիտա՛ն, արի մի
թելոք երկարութիւնը չափեմ:

ՎԱՀԱՆ.— Վա՛, արդէն թելին հասա՞ր: Այդ հօ
մեքենայից էլ արող ես աշխատում:

ԱՆԱՀԻՏ.— Հասաւ ի՞նչ ես կարծում: (Չափում և
չապիկի քեւը Վահանի վրայ): Տես ի՞նչ ծալքեր եմ արել
կրծքի վրայ: Հաւանո՞ւմ ես թէ չէ:

ՎԱՀԱՆ.— Անահիտի կարած քանին չհաւանել կը
լինի: Իսկապէս որ շատ գեղեցիկ է: Ի՞ գուր չէ մայրելն
ասում, թէ մատերդ ոսկի են:

ԱՆԱՀԻՏ.— Դէ, փուչ կենդանի, եթէ խելօք մնաս՝
այս շապիկին յարմար մի փողկապ էլ կը ստանաս ինձա-
նից նուէր:

ՎԱՀԱՆ (Ծիծաղով).— Անշուշտ գոյնը դեղին կը
լինի:

ԱՆԱՀԻՏ.— Չէ, կաս-կարմիր գոյն պիտի ընտրեմ:

որպէսզի միտինգներում աւելի ևս աքորբանաս (Հարախե-
լով կարբ և պիսկելով դեպի ձախ դուրբ), Հիմա սպասիր թե-
ւեքզ մեքենայի տակ տամ և մի բաւ արդուկեմ, որպէսզի
ամենայն ինչ կատարեալ լինի (Ելնում և, շապով, ձախ
դուրբ):

ՎԱՀԱՆ. (Այսինքնիկ).— Եստ անուշիկ հարս է մեր
Անահիտը:

ԱՇԽԷՆ.— Այո՛, բայց բաւ կը լինէր որ մի քիչ էլ
դու անուշիկ տազը լինէիր նրա համար:

ՎԱՀԱՆ.— Դա՞ն, ևս նրան ինչ կամ արել որ ինքզ
էլ գիտես, որ այս տանը ամէնքից շատ Անահիտին կամ
սիրում:

ԱՇԽԷՆ.— Կարծում ևս նրա վրայ չի՞ ազդում, որ
դու թշնամու պէս ևս վերարեւում Սիրաքին:

ՎԱՀԱՆ.— Դու էլ բան ասացիր Սիրաքը Սիրաք է,
խիկ Անահիտը՝ Անահիտ:

ԱՇԽԷՆ.— Կէ՛, բա՛ւ, թողնենք իսիր ինչ կամ ասում:
Անահիտը յայտնեց ինձ, թէ Սիրաքն ու իր ընկերները
անսխարժութիւն են ունեցել Աշոտի հետ՝ թէ ինչո՛ւ Ար-
տակին չի հետացնում իր մօտից: Պէտք է այս մասին մի
բան աներ:

ՎԱՀԱՆ. (Գրգռում).— Հիմա ինքզ ասա. ինչպէ՞ս
կ'ուզէիր, որ ևս վերարեւուէի գէպի Սիրաքը: Աէ՞ նա գի-
տէ, որ մենչիկները որսի շների պէս ընկել են Արտակի
յետեից, որպէսզի նրան ծուխի-ծուխի անեն:

ԱՇԽԷՆ.— Դրա մասին խօսելու ժամանակը չէ: Պէտք
է մի ուրիշ թագաոց դանել:

ՎԱՀԱՆ.— Իսու, հիմա Գեղամը կը գայ և միտին
կը խորհրդակցինք այդ մասին: Բայց մինչև նրա գալը,
մի բան պէտք է ասեմ քեզ (Մտածում և):

ԱՇԽԷՆ.— Ի՞նչ բան:

ՎԱՀԱՆ.— Կոմիտէն այս առաւօտ ինձ վրայ մի
պարտականութիւն դրաւ, որ պիտի դժուարանամ կատար-
ել, տանց քո օգնութեան:

ԱՇԽԷՆ.— Ինչո՞ւմն է բանը:

ՎԱՀԱՆ (Զայնը ցածցնելով).— Վերջին օրերս, Սիրաքը գազտնի տեսակցութիւններ է ունեցել Երզնկայի ռազմաճակատից եկած երկու բարձրաստիճան սպաների հետ: Դու պէտք է լմանաս, թէ ինչի՞ մասին է եղել նրանց խօսակցութիւնը:

ԱՇԽԷՆ.— Ինչպէ՞ս լմանամ:

ՎԱՀԱՆ.— Կարող ես խօսք քաշել Անահիտից, որին Սիրաքն ընդհանրապէս տեղեակ է պահում իր գործերին:

ԱՇԽԷՆ.— Ինչո՞ւ ինքզ չես անում այդ:

ՎԱՀԱՆ.— Որովհետեւ Անահիտը վայրկենապէս պապանձոււմ է, երբ ես մինչեւ իսկ ամենաանմեղ քաղաքական հարցեր եմ տալիս նրան:

ԱՇԽԷՆ.— Ես չեմ կարող օգտակար լինել այս գործում:

ՎԱՀԱՆ (Զարմացած).— Ինչո՞ւ:

ԱՇԽԷՆ.— Որովհետեւ անազնուութիւն եմ համարում դաւելով խօսք գուրս քաշել մի մարդուց, որ վերաբերոււմ է ինձ իրքեւ սրտազին բարեկամի եւ հարազատի:

ՎԱՀԱՆ.— Դու դեռ այդ երեխայական մտայնութեան մէջ ես:

ԱՇԽԷՆ.— Երեխան ինքզ ես:

ՎԱՀԱՆ.— Ձէ՞, տեսնում եմ, որ դու դեռ հասունացած չես բուշեւիզմի համար:

ԱՇԽԷՆ.— Բուշեւիզմը անազնուութիւն է պարտադրում իր հետեւորդներին:

ՎԱՀԱՆ.— Ոչ, բայց նա պարտադրում է զանազանի իրարից ազնիւն ու անազնիւր:

ԱՇԽԷՆ (Հեղմանելով).— Քո հեղինակաւոր կարծիքով ի՞նչն է ազնիւ եւ ինչն՝ անազնիւ:

ՎԱՀԱՆ.— Ազնիւն այն է, որ ես, պրոլետարական յեղափոխութեան համար պայքարելիս, ոչ հարազատ եմ հարցնում եւ ոչ անհարազատ իսկ անազնիւն էլ այն է, որ դու այդ յեղափոխութեան շահերն աւելի ստոր ես դասում, քան քո ազգակցական կամ քարեկամական կառկերը: Հասկացա՞ր:

ԱՇԽԷՆ (Սրհամարհանյով).— Հասկացայ:

Վ.Ա.Հ.Ա.Ն.— Ի՞նչը հասկացար:

ԱՇԽԷՆ.— Այն՝ որ քո սասածը իդխտութիւն է: Ես քեզնից լաւ գիտեմ, որ յանուն զաղափարի կարելի է թշնամանայ նոյնիսկ ամենամոտիկ բարեկամի հետ: Բայց երբ մէկը վարոււմ է քեզ հետ համաձայն մարդկային-բարոյական օրէնքներին՝ դու էլ պարտաւոր ես չկորցնել քո մարդկային նկարագիրը: Հասկացա՞ր:

Վ.Ա.Հ.Ա.Ն.— Ես թքել եմ քո այդ մարդկային-բարոյական օրէնքներին վրայ, որոնցով բուժուազիտան . . .

Զանգահարութիւն

Վ.Ա.Հ.Ա.Ն. (Դիմելով դեպի նախասենեակ).— Եւ սա իրենն դեռ բուժուիկեան կուսակցութեան անդամ է համարում (Մտնում է նախասենեակ):

ԱՇԽԷՆ (Վահանի յետից).— Բարեբախտաբար մեր կուսակցութիւնը քեզ պէս արմարներից չէ կազմուած, թէ չէ իրօք որ . . .

Տ Ե Ս Ի Լ Ծ.

ԱՇԽԷՆ, Վ.Ա.Հ.Ա.Ն., ԳԵՂԱՄ

ԳԵՂԱՄ.— Բարեւ, ընկ. Աշխէն: Ձեր հայրիկը ցանկութիւն էր յայտնել ինձ տեսնելու:

Վ.Ա.Հ.Ա.Ն.— Հիմա կը կանչեմ: Բայց նախապէս կա՞րդադրենք ընկ. Արտակի խնդիրը:

ԳԵՂԱՄ.— Ի՞նչ խնդիր:

Վ.Ա.Հ.Ա.Ն.— Գանձակները կատաղած են, որ Աշոտը պահոււմ է նրան:

ԳԵՂԱՄ.— Դա՞ ինչ ստորնութիւն է:

ԱՇԽԷՆ (Ակնհերեւ յուզմունքով).— Ընկ. Գեղամ, դուք կը համաձայնէի՞ք, որ Վահանը կամ ես պատուարէինք մեր կուսակցութեան հակառակորդներին:

ԳԵՂԱՄ.— Ի հարկէ ոչ:

ԱՇԽԷՆ.— Հապա ինչո՞ւ էք պահանջում, որ Աշոտի

ընկերները համաձայնուեն:

ԳեՂԱՄ (Միմադով).— Որովհետև նրանք յիմար իդիալիստներ են և պարտաւոր են յիմարութիւն անելու: ՎԱՀԱՆ (Հեղնամիով Աշխէնի).— Հիմա հասկացա՞ր թէ բանը ինչու՞նն է:

Տ Ե Ս Ի Լ 7.

ՆՐԱՆՊ ԱՒ ՆԱՀԱՊԵՅ

ՆԱՀԱՊԵՏ (Գրուիւր հանելով աջ դռնից կանչում է).— Աշխէ՛ն, (Յանկարձ շեանելով Գեղամիին՝ մտնում է ներս) Օ՛, դուք աշտան՞դ էք Պ. Գեղամ: Վերջապէս բարեհաճեցի՞ք շնորհ բերել մեզ մօտ (Բարեւում է):

ԱՇԽԷՆ.— Հայրի՛կ, դու բան էի՞ք ուզում:

ՆԱՀԱՊԵՏ.— Այո՛, Աշխէ՛ն ջան, մի սուրճ պատրաստիր ինձ համար: Գուցէ Պ. Գեղամն էլ . . .

ԳեՂԱՄ.— Ո՛չ, ո՛չ, ևս շնորհակալ եմ:

ՆԱՀԱՊԵՏ (Աշխէնի).— Որ այդպէս է, ինձ համար պատրաստիր: Միայն շատ քաղցր չանու: (Աշխէնը կրկնում է աջ դռնով) է՛, պատմեցէ՛ք տեսնե՛նք Պ. Գեղամ: Բայց ասուած է. «Ի ժողովել երիտասարդաց՝ կաքաւին դեք»: Հօ՛ւնք ինձ իսնդարում:

ԳեՂԱՄ (Միմադով).— Ո՛չ, ինչո՞ւ: Տունը ներս է:

ՆԱՀԱՊԵՏ (Կատակով զարմանի մեղացնելով).— Ինչպէ՞ս թէ տունը իմն է, Ձէ՞ որ մասնաւոր սեփականութիւնը . . .

ԳեՂԱՄ (Խնդրով).— Պ. Նահապետեանը երևում է, բաւ տրամադրութեան մէջ է այսօր:

ՆԱՀԱՊԵՏ.— Ինչո՞ւ պէտք է վատ լինի տրամադրութիւնս, երբ ձեզ պէս քաջ երիտասարդներ ունինք, որոնք քափ-քրտինք մտած աշխատում են . . . (Միմադով) Ճշմարիտն ասած, իմ իմանում ինչի համար:

ՎԱՀԱՆ.— Մի քիչ էլ համբերի, հայրիկ, և և կ'իմանաս:

ՆԱՀԱՊԵՏ.— Համբերութեան կողմից, փոքր Աստուծոյ, ասատորէն օժտուած եմ: Բայց դուք, սիրելիք,

այնպիսի բաներ էք անում, որ ինձ պէս հանդիստ մար-
դուն էլ համբերութիւնից կը հանէք:

Գեղ.ԱՄ.— Ի՞նչ բաներ:

ՆԱՀԱՊԵՏ.— Հէնց ասե՛նք այն, որ աշխատում էք
քայքայել անդրկողիտեան բանակը: Ի՞նչ է ձեր նպատա-
կը:

Գեղ.ԱՄ.— Մեր նպատակն է, որ այս իմպերիա-
լիստական պատերազմը վերջանայ:

ՆԱՀԱՊԵՏ.— Իսկ թո՛ւրքը:

Գեղ.ԱՄ.— Թուրքը մեզանից շատ է հեռու, Պ. Նա-
հապետեան:

ՎԱՀԱՆ.— Թող մի թուրք ասկեարները մօտենան
մեր սահմաններին, եւ դու կը տեսնես, թէ մենք ինչպէ՛ս
նրանց գէնքերն ուղղել կը տանք իրենց փաշաների գէմ:

ՆԱՀԱՊԵՏ.— Քանի որ այդքան շտրճք ունէք, ին-
չո՞ւ էք սպասում, որ ասկեարները մօտենան մեր սահ-
մաններին: Փասք Աստուծոյ, ձեզ համար հայ, ռուս, թուրք
միեւնոյն բաներն են: Մտէք հէնց հիմա թուրք զօրքերի
մէջ եւ համոզեցէք, որ նրանք իրենց փաշաներին սուին-
ների ծայրը հանեն:

Գեղ.ԱՄ.— Ի՞նչպէ՞ս մտնենք:

ՆԱՀԱՊԵՏ.— Գնանք Երզնկա, եւ ձեզ նանապարհը
ցոյց տամ:

ՎԱՀԱՆ.— Ո՛չ, հայրիկ, մեզ զբաղեցնողը թուրքը
չպէտք է լինի, այլ՝ համաշխարհային յեղափոխութիւնը,
Թո՛ղ այդ յեղափոխութեան հարուածների տակ միջազ-
գային իմպերիալիզմը ջախջախուի, եւ դու կը տեսնես,
որ թրքական վտանդն ինքն իրեն յօդս կը ցնդի:

Գեղ.ԱՄ.— Եւ արդէն այդ վտանդն էլ զաշնակների
կողմից չէ՞ հնարուած: Ոչ մի նշան չկայ, թէ Թուրքիան
ազգրեսիվ միտումներ ունի յեղափոխական Ռուսաստանի
գէմ: Ընդհակառակը, նա ուզում է հաշտութիւն կնքել եւ
միջեւ հիմա կնքած կը լինէր, եթէ Միլլիւկովներն ու
Կերենսկիները չսարսափեցնէին նրան՝ Պոլսին տիրանալու
իմպերիալիստական ատրճակով:

ՎԱՀԱՆ (Գեղամին). Ինչո՞ւ ես մտանում յիշել նաև դաշնակների իմպերիալիզմը, որ հիմա, կարծեմ, վեց վիճակէթներով էլ չի գոհանում, այլ մինչև Կիլիկիա է տարածոււմ.— Մովից ծով . . . Ա՛խ, այդ շղարուած հակա-յեղափոխականները . . . Ամենից ատաջ դրանց . . .

ՆԱՀԱՊԵՏ.— Դաշնակցականն՞րն են հակայեղափոխականները:

ՎԱՀԱՆ.— Հասցա ո՞վ:

ՆԱՀԱՊԵՏ (Հեզգօրհն խաչակնքելով դեմքը).— Տէ՛ր Աստուած, տէ՛ր Աստուած: Մինչև հիմա կարծում էինք, թէ նրանց յեղափոխութիւնն է մեզ գլխացաւանք պատահառում. իսկ բանից դուրս է գալիս, որ նրանք հակայեղափոխականներ են եղել . . .

ՎԱՀԱՆ.— Իսկական յեղափոխութեան մասին դադար չունեցողները միայն կարող են խարուել նրանց յեղափոխական ֆրազէօլօգիացիայից:

ՆԱՀԱՊԵՏ.— Ես չգիտեմ, թէ իսկական յեղափոխութիւն ստելով դուք ինչ էք հասկանում: Բայց գիտեմ, որ եթէ այսօր Դաշնակցութիւնն էլ չլինի մէջտեղ՝ մենք կորած ենք:

ԳԵՂԱՄ.— Ինչո՞ւ ենք կորած:

ՆԱՀԱՊԵՏ.— Աստուած մի՛ աքաղէ, թող թաթարները օգտուելով ներկայ ընդհանուր քառսից նորից դուխաբարձացնեն հայերի դէմ, և դուք կը տեսնէք, թէ ինչո՞ւ ենք կորած:

ՎԱՀԱՆ.— Եթէ Դաշնակցութիւնը չլինի՛ հայ եւ թաթար ժողովուրդների միջև ոչ մի բան էլ չի պատահի:

ՆԱՀԱՊԵՏ (Հեզգնախօսով՝ Վահանին).— Ուրեմն, քա այդ երկար խնդրով, եթէ Դաշնակցութիւնը տապալէք, թուրքական գործակալները կարտոււմ, նախիջևնում և ուրիշ տեղեր չեն գրգռի թաթարներին հայերի դէմ և թաթարներն էլ չեն մտածի հայերին թալանելու եւ կոտորելու մասին . . . Այսպէս է հա՞, Պ. Գեղամ:

ԳԵՂԱՄ.— Այդպէս է մի լրացումով:

ՆԱՀԱՊԵՏ.— Լրացումը որն է:

ԳեղԱՄ.— Լքացումը այն է, որ գաշնակները հետ
մխասին պէտք է սանձահարել նաև թաթար ընկերին,
կույակներին և մոլլաներին, որոնք՝ զործիք գառնալով
խուրջահան էմխարները ձեռքին՝ շեղում են թաթար ժո-
ղովուրդը յեղափոխական գործից։

ՆԱՀԱՊԵՏ.— Ո՞վ պէտք է լինի գրանց սանձահար-
ողը։

ԳեղԱՄ.— Դասակարգային գիտակցութեան եկած
թաթար աշխատաւորութիւնը։

ՆԱՀԱՊԵՏ.— Լաւ չի՞ լինի արդեօք մի առժամա-
նակ յետաձգել պայքարը Դաշնակցութեան դէմ, մինչև
որ թաթար աշխատաւորութիւնը գասակարգային գիտակ-
ցութեան գոյ ևւ ապա թէ . . .

ՎԱՀԱՆ.— Զարմանալի մարդ ևս, հայրիկ. ինչո՞ւ ևս
ուզում, որ լաւ բաներն առաջ ուրիշներն սկսեն։

ՆԱՀԱՊԵՏ.— Որովհետև ձեր մտածածը լաւ բան չէ,
որդիք, այլ փաստակար բան է։ Դուք ուզում էք քայքայել
հայ ժողովուրդի մէջ գոյութիւն ունեցող միակ կազմա-
կերպուած ոյժը, մինչդեռ թաթար ժողովուրդը դեռ շատ
հեռու է իր հայադաւ ղեկավարներին չէզոքացնելու մըտ-
քից։ Խոսք չունիմ. նա էլ կարող է մի օր այդ մտքին
գալ, բայց դեռ ջուրը չտեսած կօշիկ հանն՝ ինչ է . . .

ՎԱՀԱՆ (Անհամբերութեամբ ընդհատելով).— Հայրիկ,
կարծեմ բան ունէիր ասելու ընկ. Դեղամին։

ՆԱՀԱՊԵՏ.— Այո, Խնդրում եմ Պ. Դեղամ, որ մի
ուսկնդրութիւն յաջողեցնէք ինձ համար ձեր կոմիտէտի
մօտ։

ԳեղԱՄ.— Ինչո՞ւ համար։

ՆԱՀԱՊԵՏ.— Խօսելիք ունիմ ձեր ընկերների հետ։

ՎԱՀԱՆ.— Զօրքի և գաշնակներին՝ մասին։

ՆԱՀԱՊԵՏ.— Թէ՛ գրանց և թէ՛ ուրիշ հարցերի մա-
սին։

ՎԱՀԱՆ.— Հայրիկ, մեր կոմիտէտը ժամանակ չու-
նի նման հարցերով զբաղուելու։

ՆԱՀԱՊԵՏ.— Ի՞նչ կարծիքը քեզ համար պահիր. Ես

Պ. Գեղամբի հետ եմ խօսում:

ԳԵՂԱՄ.— Զգիտեմ, թէ ո՞րքան յարմար կը լինի, բայց եւ այնպէս ես կը յայտնեմ ձեր ցանկութիւնը բնկերներին:

ՆԱՀԱՊԵՏ.— Շատ եմ խնդրում:

Տ Ե Ս Ի Լ 8.

ՆՐԱՆՔ ՍԻ ԱՇԽԷՆ

ԱՇԽԷՆ (Մանկույտ աջ դռնից).— Հայրիկ. սուշնդ սեղանին վրայ է, կ'ուզե՞ս այտեղ բերեմ:

ՆԱՀԱՊԵՏ.— Զէ, Աշխէն ջան, արդէն բուսական ժամանակ խլիցի մեր երխտասարդներից, Մի քիչ էլ յագնած եմ, (Գնդամին) Յուսով եմ, որ խնդիրս չէք մոռանայ, Դէ, ինձ ներեցէք (Ելնում է աջ դռնով):

ԱՇԽԷՆ.— Մի բան որոշեցի՞ք ընկ. Աբտակի մասին:

ԳԵՂԱՄ.— Արդէն կոմիտէտի որոշումով նա այս շաբաթ պէտք է մեկնի Պետրոգրադ, եթէ Աշտար կարողանար մի քանի օր եւս նրան պատասպարել . . .

Զանգահարութիւն

ՎԱՀԱՆ.— Սպասեցէք մի վայրկեան (Մտնում է նախասենակ):

ԱՇԽԷՆ.— Պետրոգրադից հեռագիր շատացուե՞ց:

ԳԵՂԱՄ.— Ո՛չ:

ԱՇԽԷՆ.— Բայց այս սառւած ասում էին, թէ հեռագրական հազարակցութիւնը վերականգնած է . . .

ՎԱՀԱՆ (Նայտանենակում).— Բարեւ. Հէնց նոր քո մասին էինք խօսում: Լաւ ժամանակին հասար:

Տ Ե Ս Ի Լ 9.

ՆՐԱՆՔ ՆԻ ԱՇՈՅ

ԱՇՈՏ (Մանկույտ նախասենակից Վահանին հետ միասին).— Ի՞նչ կայ որ:

ՎԱՀԱՆ.— Ը՞նկ. Աբտակի տեղափոխութեան խըն-

գիրք . . .

ԱՇՈՏ.— Այդ գործն արդէն կարգադրուած է: Հէնց որ մուխն բնկնի՝ կը տեղափոխենք:

ՎԱՀԱՆ.— Եթէ միայն մինչև այդ քո ընկերներէ կողմից մի վատութիւն չլինի . . .

ԱՇՈՏ (Խառոհեմ).— Դու ինձնից լաւ դիտես, Վահան, որ իմ ընկերները վատութեան ընդունակ չեն:

Դե՛ղ, ԱՄ (Վահանին քելը փաշտելով).— Վահանը այսպէս է խոսում երեսի նկատի ունենալով. որ ձեր ընկերները շատ են զրգուած ձեր գէ՛մ՝ ընկ. Աբտակին պահելու համար:

ԱՇՈՏ (Յուզուած).— Հաղար անգամ էլ որ աւելի զրգուած լինեն՝ նրանք իրենց թոյլ չեն տայ վատութիւն անել մի յեղափոխականի:

ԱՇԽԷՆ.— Վահանը միշտ այն տխմար կարծիքին է, թէ կուտակցական հակառակութիւնը . . .

Դե՛ղ, ԱՄ (Ընդհատելով).— Լաւ, թողնենք այդ: (Աշոտին) Ուրեմն կարող ենք կատարելապէս ապահով լինել Աբտակի մասին:

ԱՇՈՏ.— Կատարելապէս:

Դե՛ղ, ԱՄ.— Դէ, ընկ. Վահան, հիմա կալող ենք զընտրել:

ՎԱՀԱՆ.— Գնանք:

Դե՛ղ, ԱՄ (Աշոտին և Աշխէնին).— Առայժմ ցը: (Մըտնում է նախասենեակ Վահանի հետ):

ԱՇՈՏ.— Աշխէն, Աբտակին դու պէտք է ուղեկցես իր նոր թագաւորը:

ԱՇԽԷՆ.— Ի՞նչպէ՞ս:

ԱՇՈՏ.— Ինքզ կը ձգտուես անձանաչելի դասնալու աստիճան, Աբտակին էլ կը հագցնես մայրիկիդ հին զոհասուններից մէկը և այդպիսով միասին կը զնաք ուր կ'ասես: Լիս, մի երկու ընկերներէ հետ, հետուից կը հետեւիմ ձեզ:

ԱՇԽԷՆ.— Շատ լաւ:

ՆՐԱՆՆԻ ԵՒ ԱՆԱՀԻՏ

ԱՆԱՀԻՏ (Մանկոյ ձախ դոնից՝ կարի շապիկը ձեռքին).
— Բարեւ, Աշոտ (Աշիկնին) Վահանը գնաց՝

ԱՇԽԷՆ.— Այո՛:

ԱՆԱՀԻՏ.— Վա՛յ անպիտան, չսպասեց էլ որ շապիկը ստանայ (Աշոտին) Ի՞նչ էր պատահել Շատ տաք-տաք էիք խօսում մեր երիտասարդներին հետ:

ԱՇՈՏ.— Զգիտե՛ս, որ նորընծայ յեղափոխականները տաք-զլուխ են լինում:

ԱՇԽԷՆ.— Նորընծա՞ս որն է. Վահանը արդէ՛ն շոր-բորդ տարին է մեր կուսակցութեան մէջ, իսկ Գեղամը աւելի եւս հին ընկեր է:

ԱՇՈՏ.— Չորս եւ աւելի տարիները բաւական երկար ժամանակ է, որպէսզի գրանք մի քիչ խելքի գային, բայց, ի՞նչ օգուտ:

ԱՇԽԷՆ.— Խելքի չգալը դու երեւի այն եւ համարում, որ մարդիկ հեշտութեամբ հեն փոխում իրենց համոզմունքները:

ԱՆԱՀԻՏ (Ծիծաղով).— Գիտե՛ս, Աշոտ, Աշխէնը քն է ակնարկում. նա ասում է, թէ դու լքել ես քո սոցիալիստական համոզմունքները:

ԱՇՈՏ.— Ի՞նչպէ՛ս թէ լքել եմ:

ԱՆԱՀԻՏ.— Ա՛յ, ի՛րեն հարցրու:

ԱՇԽԷՆ.— Ի՞նչո՞ւ պիտի ինձ հարցնի. ինքն էլ գիտէ որ այդպէս է:

ԱՇՈՏ.— Այսինքն՝ որ եւ լքե՞լ եմ իմ սոցիալիստական համոզմունքները:

ԱՇԽԷՆ.— Այո՛:

ԱՇՈՏ (Խնդրով).— «Ո՛վ սուրբ միամտութիւն»:

ԱՇԽԷՆ.— Ուղում ես ասել, թէ քո երէկի եւ այսօրուան մէջ ոչ մի փոփոխութիւն չկա՞յ:

ԱՇՈՏ.— Մի փոփոխութիւն յամենայն գէշալ կայ, նա այդ անձն է, որ այսօր եւ յստակօրէն տեսնում եմ,

թէ մեր երկրի եւ ժողովրդի զժնդակ պայմանները ի՞նչ աշտելի դժուարութիւններ են ստեղծում ուղղաձիգ դասակարգային պայքարի եւ ընդհանրապէս սոցիալիստական գործունէութեան համար Մինչդեռ երէկ, երբ ես էլ քեզ պէս, Վահանի պէս եւ ձեր միւս ընկերներն պէս վերացական հասկացողութիւն միայն ունէի հայ ժողովուրդի եւ նրա հայրենիքի մասին . . .

Հանդահարուրիւն

ԱԵԽԷՆ (Մշտմ ե նահասնենակ, նահասնենակում).—
Բարեւ, Պ. Վարդան. նորից ժողով:

ՍԻՐԱԲ (Նահասնենակում).— Ձէ, Աշխէն ջան. Բայց
մի փոքր գործ ունենա՛ք:

Տ Ե Ս Ի Լ 11.

ԱՆԱԷԼՐԵ, ԱՇՈՏ, ՍԻՐԱԲ ԵՒ ՎԱՐԴԱՆ

ՍԻՐԱԲ (Մանկրով նահասնենակից).— Օհօ՛, Աշտան էլ աշտեղ է: Այդ լաւ է: Դու էլ կ'օգնես մեզ, որպէսզի այսօրուան գրութիւնները շուտով աւարտենք: Իսկ դո՞ւ ինչ բանի ես, Անահիտ: Դեռ չվերջացրի՞ր այդ անպիտանի շապիկը:

ԱՆԱԷԼՐԵ.— Իսկի էլ անպիտան չէ: Դու ես անպիտանը, որ ամբողջ օրը երեսդ չեմ տեսում:

ՍԻՐԱԲ (Ծիծաղով ակնարկելով Վարդանին եւ Աշոթին).— Սրանց ձեռքն ընկնողի մէջ հալ կը մնա՞յ, որ կ'սով կամ ընտանիքի մասին մտածի:

ՎԱՐԴԱՆ (Խնդրեալով).— Իսկ քո ձեռքն ընկնողը, կարծեմ, կ'ին կամ ընտանիք ունենալու երազն էլ կը մտածայ:

ԱՇՈՏ (Ծիծաղով).— Դու դեռ այդ երազներո՞ւմն ես, ընկ. Վարդան:

ՎԱՐԴԱՆ.— Հապա կարծում ես թէ քեզ պէս մտադիր եմ վանական գառնալ Մի քիչ էլ սպասիր, տես թէ ի՞նչ ասօք-փասօք հարսանիք եմ սարքելու, հէնց որ Արա

ձէշը Հայաստանի մայրաքաղաք դարձաւ . . .

ՄԻՐԱՔ.— Լաւ, թողնենք կատակները եւ սկսինք մեր գործին: (Նստում է գրասեղանի առաջ եւ քրքնէ հանում դարակից) Անահիտ ջան, մեզ համար թէյ պատրաստե՛ս:

ԱՆԱՀԻՏ (Ոսյի կնկերով).— Ի՞նչո՞ւ չէ:

Զանգահարութիւն

ՄԻՐԱՔ (Անահիտին) Մի տես ո՞վ է: (Անահիտը մտնում է նախասենեակ):

Տ Ե Ս Ի Լ, 12.

ՆՐԱՆՔ ՍԻ ՄԱՌՇԵՅՂ.

ԱՆԱՀԻՏ (Մուշեղի յետիւյ մտնելով եւ շփոքուած).— Բայց ի՞նչ է պատահել, ընկ. Մուշեղ:

ՄՈՒՇԵՅՂ (Շնչահաս ընկնելով բազմոցի վրայ).— Ել ի՞նչ պէտք է պատահի Պետրոգրադում բողեւեկեան յեղաշրջում է տեղի ունեցել: Իշխանութիւնն անցել է Լենինի և Տրոցկու ձեռքը: Քաղաքացիական կռիւներ են սկսուած Պետրոգրադի շուրջը, Մոսկուայում եւ ուրիշ տեղեր:

ՄԻՐԱՔ (Այլայլուած).— Յետո՞՛յ:

ՄՈՒՇԵՅՂ.— Յեղաշրջման լուրը ստացուած է կէտօրից քիչ անց: Միաժամանակ բռնուած է բողեւեկեան Կենտրոնական Կոմիտէի գաղտնագիրը հեռագիրը այստեղի շրջանային կոմիտէին, որով հրահանգուած է անմիջապէս ապստամբութեան դրօշ բարձրացնել անդրկովկասեան խորհուրդների դէմ, եթէ սրանք ենթարկուելու չլինեն Պետրոգրադի ուղուբաւարներին: Այս հանդամանքն աչքի առաջ ունենալով՝ խորհուրդների գործադիր կոմիտէն որոշում է նախ ձեռքազակել այստեղի սկանաւոր բողեւեկներին, եւ ապա հրապարակել յեղաշրջման լուրը:

ԱՇՈՏ.— Ձերբակալութիւններն արդէն սկսուած են:

ՄՈՒՇԵՅՂ.— Այո՛, Պալատի լուսամտուտից տեսայ, որ մի քանի ոտաւ և վրացի բողեւեկիներ, միլիցիոնէրներով շրջապատուած, բերին:

Տ Ե Ս Ի Լ 13.

ՆՐԱՆՆԻՐ, ՎԱՀԱՆՐ ԵՒ ԳՍՂԱՄԸ

- ՎԱՀԱՆ (Դուռը շննդալից բանալով եւ խիստ գրգռուած).
 — Ախրա՛ք, սա սարգ զաւաճանութիւնն է՛ Պաճանջում եմ,
 որ անմիջապէս արձակել տաս բնկ. Աշտակին:
 ԱՇՈՏ.— Ի՞նչ . . . (Նկատ մ կ նախանձնակ):
 ՄԻՐԱՅ (Չարմացած).— Ի՞նչ է պատահել:
 ԳԵՂԱՄ (Գրգռուած).— Դուք շատ լաւ գիտէք, թէ
 ի՞նչ է պատահել: Սահայն յայտարարում եմ ձեզ, որ եթէ
 նրա պիտից մի մազ պակտի՛ դուք ձեռն ամբողջ գլխով պա-
 տասխանաւ կը հանաչուէք մեր կոմիտէտի առաջ:
 ՄՈՒՇԵՂ (Գոռալով՝ Գեղամին).— Լսի՛ր, ցնդած սրի-
 կոյ:

Տ Ե Ս Ի Լ 14.

ՆՐԱՆՆԻՐ ԵՒ ԱՇԽԵՆ

- ԱՇԽԵՆ (Մտնելով այ գոնից).— Այս ի՞նչ աղմուկ է:
 ՎԱՀԱՆ (Գոռալով՝ Մուշեղին).— Ծնդածը եւ սրի-
 կաները դուք էք՛ որ պնակալիզութիւնն էք անում մենչե-
 ՚իկնեքի մօտ:
 ՄՈՒՇԵՂ (Կասաղած).— Ի՞նչ սասցի՞ր . . . (Ծարձա-
 կում կ Վահանի վրայ):
 ԱՆԱՀԻՏ (Մուշեղի առաջը կտրելով).— Ընկ. Մուշե՛ղ,
 ի սէք Ասատճոյ . . .
 ՎԱՐԳԱՆ (Վահանին).— Փառք տուք Ասաքծուն, որ
 քո հօր յարկի տակ ենք գտնուում, թէ չէ . . .
 ԳԵՂԱՄ.— Թէ չէ ձեր մաուզերխատնեքին մէջդան
 կը հանէիք, այնպէս չէ՞:
 ԱՇԽԵՆ.— Բայց վերջապէս ի՞նչ է պատահել:
 ՎԱՀԱՆ.— Այն է պատահել, որ այս պարոնները
 մասնել են բնկ. Աշտակին մենչեիկ դահլճներէ ձեռքը:
 ԱՇԽԵՆ (Գոռիսն առնելով ասիերի մեք եւ ընկնելով թագ-
 մոցի վրայ). — Ա՜ . . .
 ԱՆԱՀԻՏ (Թողելով Մուշեղին՝ նկատմ կ Այսինի մօտ).

— Աշխէ՛ն, հողիս, քեզ պահիր: Ի՞նչ մատնութիւն, ի՞նչ դահիճ, յիմարութիւններ են խօսում: (Շփում է Աշխենի քունքը):

ՍԻՐԱՔ (Շտապելով Աշխենի մօտ).— Դու էլ այս խելագարների խելքո՞ւն ես ընկել:

Յ Ե Ս Ի Լ 15.

ՎԱՀԱՆ, ԱՍԿԱՊՅՍ ԵՒ ՄԵԳՐԱՆ

ՄԱԳՐԱՆ (Մտնելով նախասենեակից՝ գնումների պայուսակը ձեռքին).— Այս ի՞նչ խաբար է:

ՎԱՀԱՆ (Սիրաֆին).— Ի հարկէ մենք խելագարներ ենք, որ ձեր ստորութիւնները ձեր երեսին ենք զարկում:

ՍԻՐԱՔ (Իրենից երած).— Լաի՛ք, անզգամ, թէ չէ այդ անպատկառ լեզուդ արժատից կը հանեմ: (Յարձակում է Վահանի վրայ):

ԴԵՂԱՄ (Ձեռքը բարձրացրած դիմելով դեպի Սիրաֆը).— Ապա՞ մի փորձեցէ՛ք:

ԱՆԱՀԻՏ (Թիկունքից գրկելով Սիրաֆին և հեռացնելով Վահանից).— Սիրա՛ք, խենթացա՞ր, ինչ է:

ՄՈՒՇԵՂ (Նոյն միջոցին բռնելով Դեղամի կոկորդից).— Դո՛ւքս այստեղից, սրբիա՛յ:

ՎԱՀԱՆ (Ազատելով Դեղամին Մուշեղի ձեռքից).— Դնա՛նք, ընկ. Դեղամ: Մենք սրանց հաշիւը կը տեսնենք:

ՆԱՀԱՊԵՏ (Որ մինչև հիմա, հողաքափով և առանց օձիկի, փարսցած կանգնած էր աջ դրան շխիֆին, առաջնում է դեպի բնակ ներսը և խօսքը ուղղում Մագրաղին).— Այս ի՞նչ է կատարւում մեր հին տանը...

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

ԵՐՐՈՐԴ ԵՐԵՐ

Քեմք ցերեկայացնում է փոքրիկ պարտէզ՝ մի բանի ծառերով, որանցից ամենախոտոր զտնում է բնի կենտրոնում: Ծառերի արանում ծաղկոցներ եւ կանայ:

Պարտէզի ձախ կողմը երկյարկանի մի փոքրիկ սան ժառանգ՝ մուսի դռնով եւ լուսամուտներով: Այլ կողմը մի պատ՝ որից դուռ է բացում դէպի փողոցը: Խորում դատարանի մի պէյզամ, որի վրայ ցցուած են զոյգ Մասիսները:

Քեմք կենտրոնում, խոտը ծառի սակ, մի սեղան՝ ծածկուած սփռալով: Զորս կողմը արտուներ: Պարտէզի այս եւ այն կողմը հաս-հաս նստաւաններ:

Տ Ե Ս Ի Լ 1.

ԱՆԱՀԻՑ ԵՒ ԱՇԽԷՆ

Վարազդար բացուելու պահին Անանիայ, նստած սեղանի մօտ, աշխատում է ձեռագործի վրայ, իսկ Աշխէնը նստած մօտը, նայում է բերրին:

ԱՇԽԷՆ.— Աւրիշ ի՞նչ է գրում Սիրաքը:

ԱՆԱՀԻՑ.— Գրում է, որ շատ յազնած է եւ ամէն կերպ պիտի աշխատի մինչեւ ամսոյս վերջը աշատեղ լի՞ ներ:

ԱՇԽԷՆ.— Յետո՞յ:

ԱՆԱՀԻՑ.— Յետոյ էլ՝ որ շատ է կարօտցել Քրիստոսիկին:

ԱՇԽԷՆ (ժպտալով).— Մեծակ Քրիստոսիկին:

ԱՆԱՀԻՑ (ժպտալով զլուխը բարձրացնում է).— Էհ, մի քիչ էլ ի՞նչ եւ մեզ ամէնքիս:

ԱՇԽԷՆ (Վշտացույի պես).— Ես այդ ամէնքի մէջ

չկամ, ի հարկէ՛ :

ԱՆԱՀԻՏ.— Ինչպէ՛ս թէ չկաս, Աշխէ՛ն, Ինքզ էլ գիտես, որ Սիրաքը քեզ շատ է սիրում: Մանաւանդ Վանանի անհետանալուց յետոյ, նկատել եմ, որ նա մի ասանձին քնքշանք է տածում գէպի քեզ:

ԱՇԽԷՆ.— Եթէ այդպէս լինէր՝ թոյլ չէր տայ, որ ինձ հետացնեն պաշտօնից:

ԱՆԱՀԻՏ.— Բայց մի մոռնար, Աշխէ՛ն, թէ դա ի՛նչ պայմանների մէջ կատարուեց: Ամէն կողմը բռնակիկան շարժումները Ալեքսանդրապոլը, Կարսը, Սարիղամիշը, նոր Բայազետը ազատամբնեղի ձեռքին: Այստեղ էլ խլրտումները զօրքի մէջ: Նման պայմաններում, ո՞ր կուսակցութիւն կը հանդուրժէր, որ իր հակառակորդները մնային պետական ծառայութեան մէջ՝ մանաւանդ որ նրանցից շատերի դաւադրական աշխատանքները յայտնի էին ամէնքին:

ԱՇԽԷՆ.— Ես կուսակցութեան մասին չեմ խօսում, այլ Սիրաքի մասին: Նա լաւ գիտէր, որ ես մասնակից չէի այդ շարժումներին:

ԱՆԱՀԻՏ.— Գիտէր, ի հարկէ, բայց եթէ նա այն ժամանակուան ընդհանուր գրգռութեան մէջ ուզե՞նար քացառութիւն անել իր քրոջ համար, չէ՞ որ դա շատ անտակառ բան կը լինէր: Չես մոռացել անշուշտ, թէ այդ օրերին ընկ. Մուշեղը և ուրիշները ինչքա՛ն էին վերջովուած Սիրաքի մեղմ քաղաքականութեան գէմ: Վերջուպէս պաշտօնից ստացածդ ի՛նչ էր, որ սրտիդ դարդ ես չի՛նել:

ԱՇԽԷՆ.— Մեծ բան չէր, ի հարկէ, բայց էլի մի բան էր: Եթէ ես իմ ոտնիկից չզրկուէի՝ մեր ամուսնութեան խնդիրը արդէն կարգադրուած կը լինէր:

ԱՆԱՀԻՏ.— Եթէ բանը այդ ողորմելի ոտնիկի վրայ է մնացել՝ Սիրաքը հանոյքով կը հայթայթի քո տարեկան ոտնիկի չափ մի գումար, որպէսզի . . .

ԱՇԽԷՆ.— Ինչե՛ր ես ասում Անահիտ, Արտակը ոչ մի պայմանով չի համաձայնի դրան: Նոյնիսկ ես չեմ համաձայնի:

ԱՆԱՀԻՏ.—Շատ բարի Մեծք Սիրաքին էլ չեմք դիմի (Հանկրով մաշից մասանին) Վերցրո՛ւ այս մատանին և յո բանդ տես Սրանից յամենայն դէպս աւելի դրամ կը ստացուի, քան քո երկու տարուան պաշտանավարութիւնից:

ԱՇԽԷՆ.— Ձէ, թող մնայ Գուցէ յաջողուի մի կերպ կարգադրել այս գործը:

ԱՆԱՀԻՏ.— Ի՞նչպէ՞ս թէ մի կերպ:

ԱՇԽԷՆ.— Չգիտեմ: Արտակը որոշ ծրագիրնեք ունի, տեսնենք:

ԱՆԱՀԻՏ.— Դու ինձ լսիր ևւ վերցրու այս մատանին (Չորով ղեռամ և Այստեհի մասք). Յոյսդ որ Արտակի վրայ գնեա՛ շատ երկար պիտի սպասես:

ԱՇԽԷՆ.— Ի՞նչո՞ւ:

ԱՆԱՀԻՏ.— Արդէն մի ամիսից աւելի է, ինչ նա Հայաստանում է գործուում, և այսքան գործերի մէջ չկարողացաւ մի բան յարմարցնել իրեն համար: Աշտան իրաւունք ունի, երբ ստում է, թէ Արտակի պէս անգործնական մարդ գտուար է երեսակայել:

ԱՇԽԷՆ.— Ի՞նքը շա՞տ է գործնական:

ԱՆԱՀԻՏ.— Ի՞նչ համեմատութիւն:

ԱՇԽԷՆ.— Լա՛ւ, դու էլ շատ մի գովի քո Աշտան: Եթէ գործնական լինէք, մինչև հիմա մի բան արած կը լինէր՝ Վահանին բերել տալու համար: Մանաւանդ որ Սիրաքն այնքան խնդրեց նրան այդ մասին՝ Չանգեղուք մեկնելուց առաջ:

ԱՆԱՀԻՏ.— Բայց ի՞նչ կարող է անել Աշտը, երբ ոչ Վահանի ուր լինելն է յայտնի, ոչ էլ նրա ողջ կամ մեռած լինելը:

ԱՇԽԷՆ.— Ախ, ի՞նչ բաւ կը լինէր, այս գործը յաջողուէր: Ինչո՞ւ մայրիկը շատ է ստոռապում նրա կարօտից:

ՆՐԱՆՔ ՆԻ ԱՐՅԱԿ

ԱՐՏԱԿ (Մտնելով փողոցի դռնից).— Բարեւ ձեզ:

ԱՆԱՀԻՏ (Խնդումով՝ Արտակին).— Վերջապէ՞ս: Գիտէ՞ք ինչ: Եթէ ես Աշխէնի տեղը լինէի՝ փայտը կ'առնէի և ձեզ կը խոզէի այստեղից:

ԱՐՏԱԿ (Ժպտալով).— Ինչո՞ւ:

ԱՆԱՀԻՏ.— Մաքռ այսքան երկար իր նշանածին սպասել կը տա՞յ:

ԱՐՏԱԿ.— Ի՞նչ անհնձք մեղաւորներս, երբ ձեր այս ընդարձակ հանրապետութեան մէջ չենք կարողանում գլուխ դնելու տեղ գտնել:

ԱՆԱՀԻՏ.— Կարծեմ ձեր հանրապետութեան մէջ աւելի ևս դժուար է գլուխ դնելու տեղ գտնել, թէև նա մի քանի հարիւր անդամ աւելի ընդարձակ է, քան մերը:

ԱՐՏԱԿ.— Ճիշդ էք ասում, այնտեղ էլ մի բան չէ. Բայց խկապէս, հոգիս բերանս ելաւ, մինչև կարողացայ մի սենեակ գտնել:

ԱՇԽԷՆ (Ուրախ).— Գտա՞ր, ո՞ւր:

ԱՐՏԱԿ.— Արովեան փողոցի վրայ, Թեւոսեանի տան երկրորդ յարկում:

ԱՇԽԷՆ.— Լա՞ւ սենեակ է:

ԱՐՏԱԿ.— Ինձ համար շատ լաւ է. Ձգրտեմ քեզ ինչպէս դուք կը գայի կ'ուզե՞ս, գնանք տեսնենք:

ԱՇԽԷՆ.— Լա՞ւ:

ԱՆԱՀԻՏ (Ոտի ելնելով).— Ուրեմն, բարով վայելէք ձեր նոր սենեակը (Շարժում է դիպի ջան դուր):

ԱՐՏԱԿ.— Ո՞ւր այդպէս:

ԱՆԱՀԻՏ (Ծիծաղով).— Դուք գիտէք, որ ևս չեմ սիրում պահակութիւն անել սիրահարների մօտ (Ելնում է ջան դնով):

ԱՐՏԱԿ (Աշխէնի).— Այս ի՞նչ երախայութիւն է:

ԱՇԽԷՆ.— Կատակ է անում. Ձեռագործի թելը հասել էր, գրա համար գնացի. Դու այն ասա՞, տեսա՞ր Աշու

տինս

ԱՐՏԱԿ.— Այո՛, նրա մօտից եմ գալիս

ԱՇԽԷՆ.— Ի՞նչ էր կանչել

ԱՐՏԱԿ.— Ինձ պաշտօն են առարջաբերում պետա-
կան վերահսկողութեան մէջ

ԱՇԽԷՆ.— Ի՞նչ է պատահել այդպէս յանկարծ

ԱՐՏԱԿ.— Տրամադրութիւնները մեր հանդէպ հիմա
բուսական մեղմացած են՝ Երեւի Աշոտի և Անահիտի միջ-
նորդութիւններն էլ որոշ դեր կատարել են

ԱՇԽԷՆ (Ուրախ).— Տեսում եմ, որ այսօր ուրախ
լուրերի պաշարով ես եկել ինձ մօտ

ԱՐՏԱԿ.— Ձէ, Աշխէն, կան նաև մտահոգիչ լուրեր

ԱՇԽԷՆ.— Ի՞նչ

ԱՐՏԱԿ (Ձայնը ցածցնելով).— Այսօր Բաղուից սուր-
հանդակ եկաւ Երկու շաբաթ առաջ, մերոնք մեծ ուժեր
են զրկել Ղարաբաղ եւ Չանգեղուր

ԱՇԽԷՆ.— Ետո՞յ

ԱՐՏԱԿ.— Ուղարկուած զօրամասերի մէջ, քաղա-
քական կոմիտար է նշանակուած մեր Վահանը

ԱՇԽԷՆ (Ուրախ).— Ի՞նչ ես ասում, Արտակ, Հէնց
քիչ առաջ, նրան Հայաստան բերել տալու մասին էինք
խօսում Անահիտի հետ Իսկ նա իր ստորմէ է գալիս

ԱՐՏԱԿ.— Այո՛, բայց եթէ նա եկաւ այս կողմերը՝
Հայաստանի անժամանակ խորհրդայնացի ման կողմակից-
ները նորից պիտի գլուխ բարձրացնեն

ԱՇԽԷՆ.— Ձեմ կարծումս կոմիտէտն այնքա՛ն յըս-
տակ եւ վճռական որոշում ունի դրա դէմ

ԱՐՏԱԿ.— Այս տարուան յունուարի կոնֆերենցիան
էլ յստակ որոշում ունէր Բայց ինքզ էլ տեսար, թէ մեր
ձախակողմեանները ի՞նչ ձախլիկ դաւեշտ խաղացին Ալեք-
սանդրապոլում եւ ուրիշ տեղեր չին, փորձուած ընկեր-
ների այնքա՛ն յաջողութեամբ սկսուած կազմակերպչա-
կան աշխատանքը մի քանի օրում աւերակների կոյտի
վերածուեց այդ տխմարների երեսից . . .

ԱՇԽԷՆ.— Այնուամենայնիւ շատ եմ ուզում, որ

Վահանը դայ այստեղ: Տեսնես հիմա ինչքա՞ն է մեծացել:

ԱՐՏԱԿ (Տխուր ժպտով).— Վախենում եմ որ եթէ դայ՝ հիասթափուես:

ԱՇԽԷՆ.— Ինչո՞ւ:

ԱՐՏԱԿ.— Վահանը, Հիւսիսային Գովկասի քաղաքացիական կռիւներէ ժամանակ, հոշակ է ստացել իրբեւ անգութ եւ դատան չեկիտու Սթէ նա իր մեթոդները այստեղ էլ կիրառի՝ չեմ կարծում, թէ դու շատ հիանալու Միւս կողմից, եթէ այքի առաջ ունենաս, որ դաշնակցականներն էլ բաւական վարժ են մատուցելուստական զործերի մէջ՝ էլ կարող են երևակայել, թէ Վահանի և սրանց ընդհարումից ի՞նչ կ'ստացուի: Բայց ես երկար մնալ չեմ կարող այստեղ: սուրհանդակին պէտք է անապարհ գնեմ: Եթէ ուզում ես սենեակը տեսնել՝ մի քիչ շտապիր:

ԱՇԽԷՆ.— Սպասիր գլխարկս տանեմ, դամ: (Ելնում է շան դռով):

Տ Ե Ս Ի Լ 3.

ԱՐՏԱԿ ԵՒ ՄԱԳԹԱՂ.

ՄԱԳԹԱՂ (Մտնելով փողոցի դռնից, ձեռքին մի երկու կապոց).— Բարե՛ւ, Արտակ, ինչո՞ւ ես մի՞նակ:

ԱՐՏԱԿ.— Աշխէնին եմ սպասում:

ՄԱԳԹԱՂ.— Սենեակի խնդիրն ի՞նչ եղաւ:

ԱՐՏԱԿ.— Աքովեանի վրայ մէկը նալել եմ: Հիմա Աշխէնի հետ պիտի գնանք տեսնելու:

ՄԱԳԹԱՂ.— Խոհանոցի եւ ջրի յարմարութիւնները ունի՞:

ԱՐՏԱԿ.— Կարձեմ, բայց լաւ չնայեցի:

Տ Ե Ս Ի Լ 4.

ՆՐԱՆԿ ԱՇԽԷՆ ԵՒ ԱՆՍԱՀԻՑ

ԱՇԽԷՆ.— Ես պատրաստ եմ:

ՆՐԱՆԿ.— Աշխէն ջան, գործդ որ վերջացնես:

հնանդիպիր զեղատուն ևւ պատուիրածս կաթիլները բեր-
Անեկն.— Շատ բարի Դէ՛հ, զնանք, Արտակ:

Արտակ ևւ Առի՛ճը կ'ընում են փողոցի զոնով:

ԲԱԳԹԱՂ. (Անահիթին, որ նստում է ևւ ձնագործը բա-
ու՛մ).— Քրիստիկն ա՛ւր է: (Գլխարջը վերցնում զնում է ևւ
դանիկն):

ԱՆԱՀԻՏ.— Ապատուհին տարաւ պոստիւ Բժշկի մօտ
եղա՞ր:

ԲԱԳԹԱՂ.— Այո:

ԱՆԱՀԻՏ.— Ի՞նչ է ասում:

ԲԱԳԹԱՂ.— Ասում է, որ արեան պահասութիւն ու-
նիմ, Երկիմունքնեբիս մէջ էլ անկանոնութիւններ է
տեսնում: Այսպէս է մարդու բանը: Ծերութիւնը որ մի
անգամ դուռդ բացու՛, տասը հիւանդութիւն միասին կը
ներխուսեն: Ի՞նչ էի ուզում ասե՛լ. . . Հա՛, Սիրաքի նա-
մակին պատասխանեցի՞ր:

ԱՆԱՀԻՏ.— Չէ, ի՞նչ կայ որ:

ԲԱԳԹԱՂ.— Ուզում եմ մի երկու տղ էլ ևւ ա-
ւերացնեմ:

Տ Ե Ս Ի Լ Ե.

ՆՐԱՆՊ, ՆԱՀԱՊԵՑ ՍԻ ՎԱՐԳԱՆ

ՆԱՀԱՊԵՏ (Մտնելով Վարդանի հետ փողոցի դռնից).—
Մաղթաղ, մի տես թէ՛ ա՛ւմ եմ բերել:

ԲԱԳԹԱՂ.— Օհօ՛. . . այս ի՞նչ հրաշք է:

ՎԱՐԳԱՆ.— Բարեւ ձեզ Պ. Նահապետեան, բարեւ
Անահիտ, ինչպէ՞ս էք: Զէ՛ֆներդ, հայներդ:

ԲԱԳԹԱՂ.— Ձեզնից հարցնենք: Այս ա՛ւր էիք ան-
հետացել ասքով գլխով:

ԱՆԱՀԻՏ (Ծիծաղով).— Ընկ. Վարդանը երեւի զնա-
ցել էր փնտռելու իր հէքիաթային հարսնացուին:

ՎԱՐԳԱՆ (Անահիթին).— Ի՛նչ ծաղրեցէք. բայց
կը տեսնէք շուտով: Արդէն մի՛նչեւ մայրաքաղաք Արճէ՛լը

եբկու քայլ մնաց՝

ՆԱՀԱՊԵՏ.— Հիմա որ Երևան ունենք, էլ Արժէ՛ն ինչացու է՝

ՎԱՐԴԱՆ.— Երևանը ժամանակաւոր բան է։ Մեր մայրաքաղաքն Արժէնը պիտի դառնայ, որպէսզի նրա հրաշալի տեսարաններէց ամբողջ աշխարհի բերնի ջուրը վազի՝

ՄԱԳԹԱՂ.— Դուք այն ասացէք, ո՞ւր էիք այս շրջա հինգ ամիսը։

ՎԱՐԴԱՆ.— Մի փոքրիկ ճանապարհորդութիւն կատարեցի դէպի Պոլիս, Միջագետք եւ Կիլիկիա՝ մեր զազթականներէն այցելելու և Հայաստանի Հանրապետութեան ողջոյնները հազարգելու համար։

ՆԱՀԱՊԵՏ (Անահիտին և Մարգարին).— Այնպէս է խօսում, կարծես Խորում-Բուլախ*) և զնացել զբոսանքի համար։ (Վարդանին) է՛, ի՞նչ վիճակի մէջ գտար մեր այդ զազթական ժողովուրդը։

ՎԱՐԴԱՆ.— Նիւթապէս բաւական վատ։ Իմ տարած դրամական օգնութիւնը կաթիլ էր նրանց ծով կարիքների մէջ։ Բայց ի՞նչ խանդավառութիւն, ի՞նչ ոգևորութիւն։ Կարծես կոտորածի և տաքադրութեան ազէտը նրանց վրէժով անցած շիջիւ Ամէնքն էլ օրեր են համբուժ հայրենիք գալու համար։

ՆԱՀԱՊԵՏ (Երզում և).— Մենք եղբայրներ ունինք հեռու տեղերում՝, (Խնդրով) Կարծեմ այսպէս էիք երզում, չէ՞, Դէ՛, Անահիտ ջան, այս դեղեցիկ երգի վրայ, խնդրեմ անցիր ներս և — հոգեպահուստ երեք շիջ գարեջուր է մնացել Աւետաննի նուէրից — բե՛ր խմենք։

ԱՆԱՀԻՏ (Ոսի կնիկով).— Այս բոպէիս (Երզում և ցան դնով),

ՆԱՀԱՊԵՏ (Վարդանին).— Հիմա պատմեցէք տեսնենք, թէ էլ ուրիշ ի՞նչ է զբում Սիլաքը ձեր ընկերնե-

*) Պարեզ-գրօսարան Երևանի մօտ, Զանգու գետի ափին.

բին՝

ՄԱԳԹԱՂ.— Դուք է՛լ նամակ ունիք Սիրաքից:

ՎԱՐԴԱՆ.— Այո՛, այս առաւօտ սուբհանդակ եկաւ (Նահապետիկ): Գրում է, թէ զանգեզուրցիք սաստիկ զղջում են, որ զո՛ն են զնացել այդ բախտախնդիրների խարերայութիւններին: Անբաղաւորութեան ցուցմունքներից երևում է, որ նրանց հաւատացրած են եղել, թէ ոչ միայն երևանում, այլ և Թիֆլիսում Խորհրդային իշխանութիւն է հաստատուած:

ՆԱՀԱՊԵՏ.— Արիւնհեզութիւններ էօ չե՞ն եղեր:

ՎԱՐԴԱՆ.— Գրեթէ ոչ. միայն մի երկու վերաւորներ կան:

Տ Ե Ս Ի Լ Ե.

ՆՐԱՆԳ ՆԻ ԱՆԱՀԻՏ

Անանիոս բերում է մի սկզբնային վրայ եւեթ ժողովուրդ էւ եւրիս գաւառ: Դնում է սեղանի վրայ էւ ձեռագործ ձեւք առնում:

ՆԱՀԱՊԵՏ.— Շատ ուրախալի է, որ ամէն ինչ յաջող է վերջացել Դրա վրայ արմէ մի գաւաթ պարզել: Շատ բնաթր տեսակիցն է Վնացելի* գարեջրից յետ չէ մնում: (Լցնում է Վարդանի էւ իր գաւառները) Մաղթա՛ղ, դու էլ կ'ուզե՞ս:

ՄԱԳԹԱՂ.— Գիտես, որ ինձ խմելքն արդելւած է:

ՆԱՀԱՊԵՏ.— Իսկ դո՞ւ, Անահիտ:

ԱՆԱՀԻՏ.— Շնորհակալ եմ, հայրիկ, ևս գարեջուր չեմ խմում:

ՆԱՀԱՊԵՏ.— Մեղքը ձեր վրայ. Դէ, Պ. Վարդան, ձեր կենացը Բարի, հազար բարի եկաք: Աստուծով, վաղը միւս օրը Սիրաքն էլ կը գայ, և մի լաւ քէֆ կ'անենք:

ՄԱԳԹԱՂ (Այլերը երկինք յառելով).— Լսող կատարող լինի:

*) Յայտնի գարեջրագործ Թիֆլիզում:

ՆԱՀԱՊԵՏ (Գաւարի ցած դնելով).— Օրսո՛յ, սիրտս հովացաւ Ռայց եթէ ես ձեր տեղը լինէի, Պ. Վարդան, կը դրէի Սիրաքին, որ ներող ընթացք բանի ձերբակալուած-նեբի հանդէպ:

ՎԱՐԴԱՆ.— Ես բնաւ համաձայն չեմ ձեր մտքին, Պ. Նահապետեան: Այդ անպիտաններէ հանդէպ որքան զիջող եղանք, այնքան նրանք երես տասն: Պէտք է մի անգամ ընդմիջտ մտքեւ երկիրը նրանցից:

ՆԱՀԱՊԵՏ.— Մտքեւրը ո՞րն է Կոտորե՞լ:

ՎԱՐԴԱՆ.— Ինչո՞ւ կոտորել:

ՆԱՀԱՊԵՏ (Ծիծաղով).— Որովհետեւ մտքեւրը Դաշ-նակցականներէ բերնում մի քիչ այլ նշանակութիւն ու-նի:

ՎԱՐԴԱՆ (Ծիծաղով).— Ո՞չ, այս դէպքում խկա-կան մտքով եմ ասում մտքեւր:

ՆԱՀԱՊԵՏ.— Այսի՞նքն:

ՎԱՐԴԱՆ.— Այսինքն արտքեւրը բուռնակներին Հա-յաստանից:

ՆԱՀԱՊԵՏ.— Սխալ էք գատում, Պ. Վարդան: Դուր-սը նրանք աւելի վտանգաւոր կը լինեն: Նրանց պէտք է կապած պահել երկրի հողին: Երկրի հողը, Պ. Վարդան, անշունչ տարերք չէ. նա կենդանի էակ է, որ ունի իր սրամազըութիւնները եւ իր հրամայական պահանջները: Նրա վրայ աղբողը վաղ թէ ուշ պիտի ենթարկուի այդ պահանջներին:

ԱՆՆՂԻՏ.— Ես էլ այդպէս եմ կարծում, ընկ. Վար-դան: Ընկ. Աշոտն էլ, գիտէք արդէն, բուռնակի պէս մի բան էր. բայց մի քանի տարի Վանի, Էրզրումի եւ Մու-շի կողմերը Թափառելով՝ բուռնակին փոխեց: Անբապէս համոզուած եմ, որ եթէ մեր Վահանն էլ այստեղ լինէր եւ իր աչքով տեսնէր, թէ մեր երկիրն ինչպէ՞ս է յարու-թիւն առնում աւերակներէ միջից, նա հիմա բուռնակին այլ երդ կ'երդէր հայրենիքի մասին:

ՄԱԳԹԱՂ.— Ա՛խ, Վահան ջան, Վահան, ո՞ւր մնա-ցիր, ի՞նչ եղար, գաւազս . . . (Այնքը արքում կ):

ՆԱՀԱՊԵՏ (Տխուրեանք).— Գոնէ կարողանալնք մի լուր ասնել, գոնէ խմանալնք, որ ողջ է:

ԱՆԱՀԻՏ.— Ինչե՞ր եւ ասում, հայրիկ: Ի հարկէ ողջ է: Մէկ էլ տեսար՝ յանկարծ լոյս ընկաւ Այս վերջին ամիսներին անսպասելիօրէն ինչքա՞ն մարդիկ եկան Թուսաստանից, Ամերիկայից, Բուլղարիայից, Թումանիայից, Եգիպտոսից եւ մինչեւ անգամ Հունգարիայից եւ Հնդկաստանից, Ասաջ ո՞վ կարող էր մտածել, թէ հայրենիքը մի օր կը քաշէ այս մարդկանց գէպի իրեն:

ՆԱՀԱՊԵՏ (Լցնելով իր եւ Վարդանի զաւարները).— Որ այդպէս է, այս մէկ զաւարին էլ խմե՞ք մեր կորած-մոլորած Վահանի կենացը: Տա՛յ Աստուած, որ նա արժանանայ հայրենիքի տեսութեանը, մե՞ք էլ արժանանանք իր տեսութեանը (եմամ ե):

ՄԱԳԻՍՏ.— Ամէ՛ն: (Ոտի ելնելով եւ Վարդանին) Ինձ ներկեցէք մի բոլէ (նլնում ե շան դնում):

ՎԱՄԻԱՆ.— Խնդրեմ, խնդրեմ:

ՆԱՀԱՊԵՏ (Գալարը ցած դնելով).— Ծիշդ է ասում Անահիտը Հայրենիքի ձողակիան ուժը շա՞տ մեծ է: Արանում համարուելու համար, պէտք է տեսնել այն անհուն հրճուանքը, որ ցոյց են տալիս ամէն օր եկող զաղթականական կարաւանները՝ զնացքից իջնելիս Բայց որպէսզի այս ձողակիան սյմն աւելի եւս մեծնայ, պէտք է օր-սասջ վերաշինել երկիրը եւ հրապուրիչ դարձնել:

ՎԱՄԻԱՆ.— Իմ՝ կարծիքով, մե՞ք այսօր մեր բոլանդակ ուժերը պէտք է կենտրոնացնենք բացառապէս հայահուռքման դործի վրայ: Իսկ սրա համար, ոչ թէ երկրի վերաշինութեանը պէտք է նուիրուենք, որ երկար ժամանակի է կարօտում, այլ պէտք է ընդարձակենք երկրի սահմանները, որպէսզի Պոլսից, Միջագետքից եւ այլ վայրերից սպասուող զաղթականութեան համար տեղ բացուի:

ՆԱՀԱՊԵՏ (Ժպտալով եւ խորհրդաւոր).— Կարծեմ բաւական տեղ արդէն բացուած է, Պ. Վարդան:

ՎԱՄԻԱՆ.— Այո՛, բայց ոչ անհրաժեշտ չափով:

ՆԱՀԱՊԵՏ.— Տեսչէն, էլ ի՞նչ եւ սւգում. երկու

տարի առաջ մենք կձկուած էինք Սեւանայ լճի շուրջը, իսկ հիմա Սարիզամիշից մինչեւ Ղարարազ մեր ձեռքն էլ Տե՛ղ ես ուզում գաղթականների համար. ահա քեզ Չանդիրասարը, Վեդիրասարը, Նարուրը, Կարապոյունը և մինչեւ անգամ Չարիչատն ու Աղքաքան, որոնք ամբողջովին կամ մեծ մասամբ մաքրուած են հակապետական տարրերից:

ՎԱՐԴԱՆ.— Իսկ Տաճկահայաստանը:

ՆԱՀԱՊԵՏ (Ծանրախոհ).— Տաճկահայաստանի խրնդիրը շատ լուրջ է, Պ. Վարդան: Այդ խնդիրը լուծելու համար, զեռ պէտք է աւարտուի մի նախապատրաստական աշխատանք, որ սկսուած է արդէն և շատ յաջող կերպով:

ՎԱՐԴԱՆ.— Ի՞նչ նախապատրաստական աշխատանքի մասին է ձեր խօսքը:

ՆԱՀԱՊԵՏ (Ծոցից հանելով մի հաս ծրար սեջը քիթից).— Ա՛յ, սրտ մասին:

ՎԱՐԴԱՆ.— Ի՞նչ բան է դա:

ՆԱՀԱՊԵՏ.— Ահա մէկ-մէկ ցոյց տամ ձեզ՝ թէ ի՞նչ բան է (Իրար յեւելից քրքնր հանելով) Այս մէկը Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակն է: Այս մէկը Անկուսակցականների Միութեան յայտարարութիւնն է: Այս մէկը Հայ Ռամկավար Կուսակցութեան, կամ ինչպէս դուք կ'ասէիք, թուրքահայ բուրժուազիայի կոչն է հայ ժողովրդին: Այս մէկը ձեր ասած ուսանայ բուրժուաններից կազմուած Հայ ժողովրդական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի յայտարարութիւնն է: Այս մէկը Հայ Սոցիալ Դեմոկրատների Կուսակցութեան թուղթիկն է: Այս մէկն ալ Սոցիալիստ-Յեղափոխականների Կուսակցութեան Հայաստանի կազմակերպութեան յայտարարութիւնն է:

ՎԱՐԴԱՆ.— Ի՞նչ թղթեր են դրանք:

ՆԱՀԱՊԵՏ.— Ի՞նչ թղթեր . . . Սրանք թղթեր չեն, այլ մի-մի յուշարձաններ այն սրտառու համերաշխութեան, որ ցոյց տուին հայ ժողովրդի բոլոր հոսանքները՝ մայրենի ազատամբութիւնների աւթիլ: Հայաստանի կառավարութիւնը պաշտպանելու գործում, թէև այդ կառավարութիւնը կազմուած էր միմիայն ձեր կուսակցութեան

անդամներին:

ՎԱՐԴԱՆ.— Բայց ես չեմ հասկանում . . .

ՆԱՀԱՊԵՏ (Յափշտակաւած).— Սպասէք մի բողոք, այս
մէկը պէտք է կարգամ, որպէսզի զազափար կազմէք միւս-
ներս մասին (Նայում ե մի քրքի) Բայց աչքերս չեն ջո-
կում: Ակնոցներս էլ չզխեմ ո՛ւր եմ թողել (Որոնում է):
Վնաս չունիս Անահիտ, դո՛ւ կարգաւ Ա՛յ այտեղէն սկսիր:

ԱՆԱՀԻՏ (Կարդում է).— «Թող հայ քաջարի բանա-
կը սուրբ ուխտի երդում տայ կազմ ու պատրաստ պաշտ-
պանելու: Հայաստանի անկախութիւնը բոլոր թշնամիների
դէմ — ո՛վ, ո՛ր կողմից եւ ի՛նչ անուան տակ ուղում են,
թող լինեն նրանք: Իսկ դու, հայ ժողովուրդ, մի սիրտ, մի
հոգի դարձած, պէտք է քո սյմն ու աջակցութիւնը չխնա-
շես մեր քաջարի բանակին և մեր կառավարութեանը՝ ան-
չեղարէն ազատ ու անկախ Հայաստանը մարմնացնելու
գործում»: Ստորագրած են Հայ Ժողովրդական կուսակ-
ցութեան Հայաստանի Կենտրոնական Կոմիտէ, Սոցիալ-Դե-
մոկրատ Բանուորական կուսակցութեան Նրեւանի կոմիտէ,
Հայ Ռամկավար կուսակցութեան Հայաստանի Խորհուրդ,
Անկուսակցականների Միութեան վարչութիւն:

ՆԱՀԱՊԵՏ (Թուրքը առնելով Անահիտից և խօսքն ուղ-
ղելով Վարդանին).— Կուգէ՞ք որ շարունակեմ: Դեռ այս-
պիսի թղթեր շատ կան այս սրհնեալ ծրարում:

ՎԱՐԴԱՆ.— Բայց ես չեմ հասկանում, թէ ձեր այդ
ժողովածուն ի՛նչ կապ ունի մեր վէճի հետ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ձէ՞ որ Տաճկահայաստանի գրաւման
նախապատրաստութիւնների մասին էլինք խօսում:

ՎԱՐԴԱՆ (Կիսահեղեակաւ).— Ի՞նչքան են նախա-
պատրաստութիւնները:

ՆԱՀԱՊԵՏ (Բարձր տնով).— Այո՛, այս է նախա-
պատրաստութիւնը, Պ. Վարդան և ամենից առաջ այս
Տաճկահայաստանի գրաւումը ազդի բովանդակ ճիշտով
միայն կարող է գլուխ գալ: Այդ գործին ձեռնարկելէ ա-
ռաջ, պէտք է ազդի մէջ գանուող բոլոր հատուածները,
հոտանքները և ուժերը իրար բերել: Դուք տեսնում էք:

որ հայրենիքն արդէն զգալի շափով մերձեցրել է նրանց: Պէտք է այս մերձեցումը միութիւն դարձնել և այդ միութեանն էլ մասնակից անել հայ բուռնի կենսական:

ՎԱՐԴԱՆ.— Թեոս՝

ՆԱՀԱՊԵՏ.— Թեոս՝ երբ այս եզակի թէ՛ Տաճկահայաստանի խնդիրը եւ թէ՛ մեր միւս դժուարին խնդիրները լուծելը խաղ ու պար կը դառնան մեզ համար. հասկանում էք ՞:

ՎԱՐԴԱՆ.— (Ուսերը բորբոկով).— Երանի ձեր համար թեոս թեոս:

S B U B L 7.

ՆՐԱՆՔ ԵՒ ԱՇՈՏ

ԱՇՈՏ (Մանկով փողոցի դռնից).— Օհօ՞, դուք արդէն իրար գտել էք: Բարեւ ձեզ: (Բարձուս է նահապետին եւ Անահիթին):

ՆԱՀԱՊԵՏ.— Գտնելն էլ խօսք է: Զեր մէջ մի հասակ չէնք ունենում մարդ կար, նրան էլ շատ տեսաք ինձ համար եւ հեռացրիք այստեղից: Մի ժամից աւելի է հեռը խօսում եմ եւ չեմ կշտանում:

ԱՆԱՀԻՏ (Աշոտին).— Հայրիկն ուզում է ասել, թէ ընկ. Վարդանի հետ վիճելուց չէ կշտանում: Հէնց որ իրար տեսան . . .

ԱՇՈՏ (Անահիթին).— Սպասէք, հիմա ես խաղաղութիւն կը հաստատեմ ձերանց մէջ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ընդհակառակը, հէնց դու էիր մեզ պակասում՝ վէճը վերսկսելու համար:

ԱՇՈՏ.— Ինչպէ՞ս թէ:

ՆԱՀԱՊԵՏ.— Եղբայր, դու եւ ընկերներդ առաւօտից մինչեւ երեկոյ այս ու այն կողմն էք վաղվազում, վերաշինական գործերի համար, իսկ քո այս ընկերք պնդում է, թէ վերաշինական գործերը վաղաժամ են: Դաշնակցականներին այս հերթական հակասութիւնը ինչպէ՞ս բացատրենք:

ԱՇՈՏ.— Պէտք է բացատրէք նրանով, որ ընկ' Վարդանի ականջներն այնպէս են դժգոհում Սարգսրարարի, Վարաքիյիսէի, Ջոզի եւ Նախիջևանի կոռւնքից, որ նա մտրօի ու գնդանի մեղեկիների քաղցրութիւնը չէ զգում:

ՎԱՐԴԱՆ.— Բեղնից էլ լաւ եմ զգում այդ քաղցրութիւնը: Դու ո՞ւր էիր, երբ ես մտրօի ու գնդանի հետ գիշերներ էի լուսացնում Պարսկաստանի մեր զինանոցներում:

ԱՇՈՏ.— Հապա ինչի՞ մասին է վէճը:

ՎԱՐԴԱՆ.— Վէճը նրա մասին է, թէ մենք առաջին հերթին ինչո՞վ պէտք է զբաղուենք. մեր սահմանների բնդարձակումն ո՞վ, թէ՞ մեր ձեռքը զտնուած գաւառների բարեշինութեամբ:

ԱՇՈՏ.— Երկուսն էլ առաջին հերթին զբուած խընդիրներ են:

ՎԱՐԴԱՆ (Կամակախառն հեղինակով).— Լաւ կը լիներ, որ մեր վսեմաշուք նախարարները չարհամարհէին մողոմբդական խմատութիւնը, որ ստում է.

«Եթէ երկու որսի հետից ընկնի մեռակ մի բազի՝

Ոչ մէկիմ էլ ճա յի հասնի, որքան արագ էլ վազի»:

ԱՇՈՏ.— Համոզուելու համար, որ քո քանաստեղծական համեմատութիւնը տեղին չէ, բարեհաճիր վազը անցրնելու իմ գրասենեակը:

ՎԱՐԴԱՆ.— Գամ ի՞նչ անեմ:

ԱՇՈՏ.— Ես քեզ համար կը կազմակերպեմ մի արշաւ դէպի գորական, ներքին գործերի, զիւղատնտեսական, հաղորդակցութեան, ֆինանսների եւ կրթական գործերի նախարարութիւնները, որպէսզի գու քո բարի աչքերով տեսնես, թէ այս վերջին 4-5 ամիսների ընթացքին, Հանրապետութեան սահմանների բնդարձակման հետ միասին, ի՞նչ ահագին վերաշինական աշխատանք է կատարուել մեր պետական և հանրային կեանքի բոլոր մարզերի մէջ:

ԱՆԱՀԻՏ.— Եւ միայն նախարարութիւնները չեն եռանդուն աշխատանքի լծուած, ընկ' Վարդան, հապա

նաեւ հանրային կազմակերպութիւնները: Մօտիկից տեղեակ եմ մի քանի կանոցի ընկերութիւնների դործունէութեանը, ինչպէս, օրինակ, «Երևանի Հայուհեաց Միութիւնը», «Վասպուրահանի կանոնց Միութիւնը», «Մանկապարտէզ» ընկերութիւնը եւն.: Չէք կարող երևակայել, թէ խնամատարութեան եւ բարեկարգութեան մարզերի մէջ, ինչքան արժէքաւոր գործ են կատարում սրանք:

ԱՇՈՏ (Անահիթին).— Ինչո՞ւ ես մտանում յիշատակել նաև Հայաստանի Գրական, Տեխնիքական, Իրաւաբանական, Բժշկական, Հրատարակչական, Զօրա-Տնտեսական, Մարմնամարզական եւ միւս ընկերութիւններէ վերաշինական աշխատանքները:

ՆԱՀԱՊԵՏ (Վարդանին).— Այս աշխատանքների անհրաժեշտութիւնը ըմբռնելու համար, ես ձեզ խորհուրդ կը տամ, Պ. Վարդան, որ մի քանի շաբաթ շրջագայէք մեր գիւղերը: Անցեալ ամիս, մասնակցելով Հնութեանց Պահպանման Կոմիտէի կազմակերպած արշաւին՝ այցելեցի բազմաթիւ գիւղեր և աւաններ: Գիտէ՞ք, աչքով տեսնելուց յետոյ էլ, դժուար է հաւատալ, որ մի քարոզած ու քայքայուած ժողովուրդ, ընդամէնը մի տարում, կարող է այս աստիճանի շտկել իր մէջքը: (Լցնելով գաւարները) Չէ, այս խօսքի վրայ պէտք է խմենք մեր ժողովրդի կենացը: մեր սքանչելի ժողովրդի, որ լերկ ժայռերն էլ շէնութիւն կը դարձնի, եթէ միայն իրեն չխանգարեն: Կեցցէ՛ մեր ժողովուրդը (Խնամ է):

ՎԱՐԴԱՆ (Ժպտաղով).— Դրան խօսք չունիմ ի հարկէ: (Խնամ է):

ԱՇՈՏ.— Գալով մեր վերաշինական նախադժուաներին՝ վազը, եթէ կ'ուզես, ես քեզ կը ծանօթացնեմ Բաթում-Կարս-Սարգաբարազ երկաթուղապահի ծրագրին, որ արդէն հաստատուած է նախարարական խորհրդի կողմից: կը ծանօթացնեմ Գլխաւոր Ծարտարապետի Վարչութեան մշակած գործարանական յատակագրերին, կը ծանօթացնեմ այն նախապարտատական աշխատանքներին, որ կատարուած է Հայաստանի Զրային ուժերը եւ հանքային հարը-

առ. Թիւնները շահագործելու համար, եւ մեծք կը տեսնենք, թէ դու սրանցից ո՛րն ես աւելի ստորագաս համարում քան ուրիշը:

ՎԱՐԴԱՆ.— Լա՛ւ, հերիք է ինձ լեզուախորով անէք: Կարծէք՝ լեռներից իջած քրդի պէս՝ ոչ շինարարութեան մասին գաղափար ունիմ եւ ոչ էլ նրա կարեւորութեան մասին:

ՆԱՀԱՊԵՏ.— Գրեմնք, որ գաղափար ունիք, Պ. Վարդան: Ի՞նչ ուզածք այն է միայն, որ մեզ պէս հրճուէք և հպարտանաք՝ տեսնելով թէ Հայոց Աշխարհը ի՛նչ կորովով եւ ինչքա՛ն փայլուն հետանկարներով է վերածնուում աւերակների միջից (Լյնելով զաւարմէրը) Ի՛նչ, այս մի գաւաթըն էլ պարզենք մեր Հայոց Աշխարհի, մեր սիրուն հայրենիքի կենացը:

ՎԱՐԴԱՆ (ժպտալով).— Դրան էլ խօսք չունիմ (կըմտւմ է):

Տ Ե Ս Ի Լ Տ.

ՆՐԱՆՔ ԵՒ ՍՈՒՐՀԱՆԴԱՆԵՐ

ՍՈՒՐՀԱՆԴԱՆԻ (Մտնելով փողոցի դռնից և շտապով դիմելով Աշոթին).— Պ. Նախարար՛ք, վարչապետի գրասենեակից հիմա ստացուեց այս շտապագրական ծրարը: Պատուիրուած է անմիջապէս հասցնել ձեզ:

ԱՇՈՏ (Շտապով բանալով).— Ի՛նչ պէտք է լինի (Այլի անցնելուց յետո՛յ՝ Սուրհանդակին) Դուք կարող էք գրնար (Սուրհանդակը կընում և փողոցի դռնով) Վերջապէ՛ս . . . (Ոտի է կընում):

ՎԱՐԴԱՆ.— Ի՛նչ է այդ . . .

ՆԱՀԱՊԵՏ.— Կարելի՞ է հարցնել . . .

ԱՇՈՏ (Ուրախ).— Հաշտութեան գաշինքը ստորագրուել է:

ՆԱՀԱՊԵՏ (Անհամբեր).— Յետո՞յ:

ԱՇՈՏ.— Յետոն ինքներդ կարգացէ՛ք եւ տեսէ՛ք (Մեկնում է քուլքը Նանպակին):

ԱՆԱՀԻՏ.— Տուէք եւ կարգած: Հայրիկն ակնոցնե-
րը կորցրել է: (Անճում կ քուղրն Աշոխի անոցից եւ կարդում).
«Պարոն վարչապետի կարգադրութեամբ, պատիւ ունինք
յայտնելու ձեզ, որ համաձայն Փարիզի Պատուիրակութեան
պաշտօնական հաղորդագրութեան, ամսոյս 10-ին, ցերեկ-
ուան ժամը 4-ին, Սելբուժ կնքուած է հաշտութեան գաշ-
նադիր Հայաստանի Պատուիրակութեան մասնակցութեամբ:
Դաշնագրի գլխաւոր կէտերն են. առաջին՝ Թուրքիան յայ-
տարարուժ է, որ ինքք ձանաչուժ է Հայաստանը, ինչպէս
այդ արել են արդէն Դաշնակից պետութիւնները, իրերն
ազատ ու անկախ պետութիւն: Երկրորդ՝ Հայաստանի եւ
Թուրքիայի սահմանադիր պետի անցնի Տրապիզոնի, Էր-
զրուժի, Բիթլիսի եւ Վանի վիրայէթներով՝ Վիրտնի իրա-
ւարարութեամբ:»

Այս առթիւ Պ. վարչապետը հրաւիրում է ձեզ ան-
միջապէս գալ նախարարական խորհուրդին՝

ԱՇՈՏ (Նահապետի).— Հիմա տեսա՞ք, Դէ, ընկ-
Վարդան, վե՛ր կացի Պէտք է մի քանի անհրաժեշտ կար-
գադրութիւններ անել: Եւ, ամենից առաջ, պէտք է հետա-
զրել Սիրաքին, Յանսութիւն, (Շտապում կ դեպի փողոցի
դուռ):

ՎԱՐԴԱՆ (Շտապելով Աշոխի յետեւից).— Յանսութիւն,
Պ. Նահապետեան:

ՆԱՀԱՊԵՏ (Շշմածի պէս, շարժուելով դեպի զնացոյնե-
րը).— Սպասեցէ՛ք . . . Ի՞նչ կզաւ ձեզ . . . Լսեցէ՛ք ինչ եմ
ասում:

ՎԱՐԴԱՆ (Կանգ առնելով, Աշոխի հետ միասին դրան
շեմփն).— Ի՞նչ է:

ՆԱՀԱՊԵՏ.— Ձեր գործերը վերջացնելուց յետոյ, ձեր
ցածկացած ընկերներին էլ հետնեղ առնելով՝ եկէ՛ք այս-
տեղ: Ես այս ծառի տակ ձեզ այնպիսի քէֆ տամ, այնպի-
սի՞ քէֆ . . .

ՎԱՐԴԱՆ (Ծիծաղով).— Շատ բարի, Պ. Նահապետ-
եան (Ելնում կ Աշոխի յետեւից):

ՆԱՀԱՊԵՏ (Քղազգիտ).— Անահիտ, պէտք է պատ-

շատառութիւն տեսնել: Առնուազն քսանչիւնդ հոգու պատրաստութիւն (Կանչում է բարձր ձայնով) Մաղթա՞ղ, Մաղթաղ . . .

Տ Ե Ս Ի Լ 9.

ՆՐԱՆՔ ԵՒ ՄԱԳԻՍՏԱՂ

ՄԱԳԻՍՏԱՂ (Ելնելով սան դռնից՝ ինչ վախեցած).— Ի՞նչ խաբար է:

ՆԱՀԱՊԵՏ (Թափշակութեան մէջ).— Արի այստեղ, Մաղթաղ ջան, արի:

ՄԱԳԻՍՏԱՂ.— Ի՞նչ է պատահել ա՛յ մարդ:

ԱՆԱՀԻՏ.— Մայրիկ, Սեւրուժ հաշտութեան դաշնագիր է կնքուել Տասկաստանի հետ Միացեալ եւ անկախ Հայաստանի պահանջն ընդունուած է:

ՄԱԳԻՍՏԱՂ (Դեռ եւս շքմած).— Ի՞նչե՞ր էք ասում, բան չեմ հասկանում:

ՆԱՀԱՊԵՏ (Մի ձեռքով գրկելով Մաղթաղի մէջքը եւ յափշտակութեան մէջ).— Այո՛, սիրելիս, հայ ժողովրդի դարաւոր երազը իրականանում է: Ի՞նչ երջանկութիւն, Մաղթա՛ղ, որ մենք ապրեցինք մի՛նչեւ այս օրը . . .

ՄԱԳԻՍՏԱՂ.— Սա երա՞զ է, ի՞նչ է:

ՆԱՀԱՊԵՏ (Թափշակութեան մէջ).— Ի՞նչո՞ւ Յետու նաւթա՛յի գօրութիւնը չունիմ, որ ընդմիշտ կանգնեցնեմ այս չքնաղ արեգակը Հայոց Աշխարհի երկնակամարի վըրայ . . .

Տ Ե Ս Ի Լ 10.

ՆՐԱՆՔ ԵՒ ԱՐՏԱԿ

ԱՐՏԱԿ (Շտապով ներս մտնելով փոքրի դռնից եւ դուռը կողպելով հեւ ի հեւ զայիս է եւ բնկնում մի արոտի վրայ. Կցկատը եւ շնչանկոծ ձայնով).— Աշտան այստեղ չէ՞:

ԱՆԱՀԻՏ (Շտապով նրան մօտենալով).— Ոչ, ի՞նչ կա՞յ որ:

ԱՐՏԱԿ.— Հապա ասացին . . .

ՄԱԳԹԱՂ.— Ի՞նչ է պատահել, Արտակ:

ԱՐՏԱԿ.— Ոչինչ չեմ հասկանում . . .

ՆԱՀԱՊԵՏ.— Ի՞նչը չես հասկանում:

ԱՐՏԱԿ.— Մի ժամից ի վեր, ինձ փնտառւմ են ամէն կողմ. Տակնուլբայ են արել տանտիկնոջս բնակարանը, եղել են բոլոր ծանօթներս մօտ:

ՆԱՀԱՊԵՏ.— Ո՞վքեր:

ԱՐՏԱԿ.— Դաշնակցական մտաւղերիտները:

ԱՆԱՀԻՏ.— Ի՞նչ էք ասում, Արտակ, Աշոտը եւ ընկ. Վարդանը ընդամէնը մի քանի բողոք առաջ մեզ մօտ էին, Այդպիսի բան որ լինէր . . . Թիւրքիմացութեան մէջ էք:

ԱՐՏԱԿ.— Ոչ մի թիւրքիմացութիւն չկայ, Կոմիտէտի անդամներն են եղել, Ասել են, որ ուր էլ ինձ գտնեն՝ տեղն ու տեղը պիտի դնդակահարեն:

ՄԱԳԹԱՂ.— Բայց, ի՞նչ է պատահել, վերջապէս:

ԱՐՏԱԿ.— Ոչինչ չեմ կարողանում հասկանալ, Երկու ժամ չկայ, որ ինձ պատօն էին առաջարկում, խնդրեմ հալածում են իբրեւ որսի դադան: Ի՞նչպէ՞ս հասկանամ:

Պարտի դուր ձեռում են ուժգին.

ՆԱՀԱՊԵՏ (Շտայով).— Մագթա՛ղ, Անահիտ, տարէք Արտակին մասանը եւ թագցրէք զէ՛նքի մեծ արկղում, մինչ չեւ որ տեսնենք, թէ սա ի՞նչ բան է:

Թագրահն ու Անահիտը Արտակի հետ շտայով ելում են ասն դրանով, իսկ Նաճապետը գնում բանում է փողոցի դուր:

Տ Ե Ս Ի Լ 11.

ՆԱՀԱՊԵՏ, ՄՈՒՇԵՂ ԵՒ ԵՐԼՈՒ ԶԻՆՈՒԱՅ
ԼԵՆԻՆԱՍԵՐՆԵՐ

ՄՈՒՇԵՂ (Այլապրում դիմով եւ հետադիմ).— Պ. Նա-
հապետեան, ցոյց տուէք, թէ ո՛ւր է Արտակը:

ՆԱՀԱՊԵՏ.— Ի՞նչ Արտակ:

ՄՈՒՇԵՂ.— Այն բոլիւիկ Արտակը, որ շարունակ

պատում է Օր. Աշխէնի հետ:

ՆԱՀԱՊԵՏ (Շփորուած).— Այստեղ Արտակ չկայ:

ՄՈՒՇԵՂ (Գոռարով).— Ի՞նչպէ՞ս թէ չկայ: Ես ինքս տեսայ, որ յետեւի այդու ճանապարհով վաղու՛մ էր դէպի ձեր տան կողմը:

ՆԱՀԱՊԵՏ.— Ձէ՛, մեր տունը չէ մտել: Ինքներդ տեսար, որ դուռը կողպած էր: Բայց ի՞նչ է պատահել:

ՄՈՒՇԵՂ (Գոռուած).— Պ. Նահապետեան, հերիք են այդ խողերը Օղտուկելով ձեր սրբու բացակայութիւնից, դուք ձեր տունը բոլորելիքան դաւադրութիւններէ բոյն էք դարձրել: Վայել չէ դա ձեզ:

ՆԱՀԱՊԵՏ (Ձայնը քարտազանելով).— Ի՞նչ, խելագարուել էք, ինչ է, Պ. Մուշեղ:

ՄՈՒՇԵՂ (Խիստ գոռուած).— Խելագարը դուք էք, դատումս ձերուկ, որ ձեր շողորթութ միջնորդութիւններով արգելք հանդիսացաք, որ ես այդ դաւաճանների ծուխը մարէի: Բազուից շարունակ մեր գէ՛մ դաւողները ձեր փոյտիցած սրկաններն են: (Ձարտրեամբ) Սակայն ոչինչ, հիմա կը հանգստանաք...

ՆԱՀԱՊԵՏ (Վախեցած).— Բայց ի՞նչ է պատահել, վերջապէս:

ՄՈՒՇԵՂ (Նկեկելով Նահապետի անսք մի հեռախօսազիր).— Կարգացէ՛ք եւ տեսէ՛ք, թէ ինչ է պատահել:

ՆԱՀԱՊԵՏ (Վերցնելով քուրքը եւ որոնելով գրպանները).— Այդ անտէր ակնոցները...

ՄՈՒՇԵՂ (Խիչելով հեռախօսազիրը Նահապետի դուռը դնոյց).— Տուէ՛ք ինձ (Կարդում է) Հեռախօսազիր Քեշիշքենդից: Ն. Յ. Գ. Հայաստանի Կենտր. Կոմիտէին այս բուլէիս տեղս հասած սուբհանդակը մեզ յայտանց Գորխի կոմիտէի հետեւեալ երկտողը. « Չանգեղուրի վերջին կոլւններէ ժամանակ, զերի է ընկած եւ գաղանաբար սպանուած մեր սքանչելի բնիկը Սիրաք Նահապետեանը: Սպանութիւնը կատարուած է Սիրաքի հարազատ կըրօր, տիրահոջակ չեկիսա Վահանի հրամանով եւ նրա ներկայութեամբ », Ն. Յ.

Դաշնակցութեան Քեչիչֆեհնդի կումիտէ՞ (Նահապետեանին)
Ահա՛ թէ ինչ է պատահել:

ՆԱՀԱՊԵՏ (Իրեն կորցրած).— Ինչպէ՞ս... Ինչպէ՞ս թէ
Սիրաքը... Վահան՞ն... սպաննութի՞ւն... (Մուշեղին) Ինչ ասացի՞ր. մի նորից կարգա՛:

Մուշեղը տեսնելով իր ֆայի սուկայի ազդեցութիւնը՝ ակնարկով կարգադրում է, որ իր ուղեկիցները դուրս գան փողոցի դռնով եւ ին՛ն էլ, ընկճուած, ընկրկելով ելնում է նրանց հետէից:

ՆԱՀԱՊԵՏ (Մուշեղին՝ նրա երեսնու փայրկեանին).— Ըստ
պատի՛ր... Ինչ եզու այդ թուղթը (Որոհում է)... Ինչ էր
դրած... (Դառնում է դէպի տան դուռը, ուզում է Մաքրադ
պոռայ. քայց ձեռնով փակում է բերանը. խածնում բքանալի
արուստը եւ դառնալով դէպի սեղանը՝ յենում ծառիկն) Ուրեմն
այդպէ՞ս... Ուրեմն Վահանը Սիրաքի՞ն... Սիրաքի՞ն հա,
հա, հա... (Միծառլը փոխում է շացի) Սիրա՞ք, Սիրա՞ք...
(Ընկնում է արողի վրայ եւ ուժգին հեկեկում: Պահ մի ապշա-
հար շուրթիւնից յետոյ). Կայէ՞ն, Կայէ՞ն, ո՞ւր է եղբայրդ...

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Ր

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԵՐ

Քե՛մք ներկայացնում է մեծ բնդունարան:

Խորի պատից դուռ՝ դէպի նախասենեակ: Չախ պատից՝ խորում՝
դուռ դէպի նախապէսի սենեակը: Այ պատից՝ նախաբեմին մօտ՝ դուռ դէ-
պի Արտակի և Աշխենի սենեակները:

Գուների վրայ կարմիր վարազոյրներ:

Գրողնաբանական Կուլտուրայի պահանջներին համապատասխան կա-
նաւարտութիւն, կարմիր գոյնի գերակերութեամբ: Նախաբեմի մօտ մի կլո-
բատան սեղան՝ տուրք արտուներ:

Խորի դրան վերեր կախուած է Լենինի մեծադիր պատկերը, աջ
պատին՝ Մարտի պատկերը, իսկ ձախ պատին՝ սրբաբան իւզանկարը:

Տ Ե Ս Ի Լ 1.

ԱՆԱՀԻՑ ԵՒ ԱՇԽԷՆ

Վարազոյրի բացուելու ժամանակ, Անահիթը՝ զլխարկով և վերաբ-
կուով, իսկ Աշխենը՝ առաւօտեան զգեստով՝ նստած են նախաբեմի սեղանի
տուրք:

ԱՆԱՀԻՍ.— *Չգիտե՞ս թէ հայրիկն ինչու համար է
կանչել ինձ:*

ԱՇԽԷՆ.— *Ոչ:*

ԱՆԱՀԻՍ.— *Իսկ դու ինչո՞ւ ես այդպէս զուճատ:*

ԱՇԽԷՆ.— *Արտակը գիշերս գործով գուրսն էր, ես
էլ չկարողացայ այնք փակել: Դու այստեղից ուղիղ կայա-
րա՞ն ես գնալու:*

ԱՆԱՀԻՍ.— *Այո:*

ԱՇԽԷՆ.— *Հագա ինչո՞ւ երեխաներին տանը թո-
ղեցիր:*

ԱՆԱՀԻՏ.— Գրիստիկը շատ պատանու-պատանու եղաւ հետս գալու համար Սահայն Սիմոնիկին մենակ ձգել չէր կարելի:

